ԱՒ. ՅԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.

ՊՈՕՇԵԱՆ

ԵՒ

ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

Հրատարակութիւն

ՀԱՅԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Գինն է 25 կոպ.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Վարագեանի
1908

2 (1)

ՊՈՕՇԵԱՆ

ԵՒ

ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

Հրատարակութիւն
ՀԱՅԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Սաղեանի
1908

Հեղինակ
ՏՀ3



2 (1)

Իւր յաղելի ուսուցիչ

Պ. Մանուկ Աբեղեանին

Նուէր
Աշխատասիրողից

Պռոշեանի առանձին գրքով հրատարակուած ինքնուրոյն գրուածները և մեացած մի քանի կարևորները։

---

1. *Սօս եւ Վարդիթեր* 1860, 1887, 1905.
2. *Աղասի ողբերգութիւն* 1863.
3. *Դարաբաղու տիր. Մարիամեան աղջկանց դպրոցի բացումը* 1864.
4. *Ագուլեաց երկսեռ դպրոցների բացումը* 1867.
5. *Կռուածաղիկ* 1878, 1897.
6. *Հացի Խնդիր* 1880, 1904.
7. *Շահէն* 1883, 1905.
8. *Ցնցեր* 1889.
9. *Բղդէ* 1890.
10. *Սկիզբն Երկանց* 1892.
11. *Ցուշիկներ* I 1894.
12. *Նա* 1896.
13. *Աբցիզչի* 1896.
14. *Միքէլ Աղենց Արդիւլը* 1896.
15. *Մեր Խէշօն* 1899.
16. *Ցունսն* 1901.

---

1. *Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ Մեղու* 1859, № 16, *Երկրորդ անգամ Աղբիւր* 1888 *սեպտ.*
2. *Որսորդ Բաղդոն. Արաքս* 1894 *Ա.*
3. *Եկեղեցական հաշուէտուութիւն (պատկեր). Արաքս* 1894 *Բ.*
4. *Օրը կիւրակի է, երազը սուտ. Բանասէր* 1903.
5. *Մնունք. Լումայ* 1900 *Ա.*
6. *Ցանոս. Լումայ* 1903 № 4.
7. *Լուսանկարչի յիշատակարանից. Մասիս* 1893, 458—463.

49-ա

ՊՈՕՇԵԱՆ ԵՒ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

1. Պոշեանի բոլոր վեպերը։
2. Ա. Զօպանեան. Անահիտ 1899 թ. № 8.
3. Ն. Քարամեան. Մուրճ 1889 թ.
4. Լէօ. Ռուսահայոց գրականութիւնը. Վենետիկ 1904 թ.
5. Մ. Նալբանդեան. Սօս և Վարդիթերի առթիւ Հանդ. գրական և պատմական։

Ա.

Պերճ Պոշեանը ծնուել է 1837 թ. Աշտարակ գիւղում մի աղքատ ընտանիքի մէջ. սկզբնական անունը Յովհաննէս է՝ Տէր-Առաքելեան ազգանունով։ Նրա հայրը պարապում էր դերձակութեամբ, բայց ինչպէս գիւղական միւս արհեստները, այնպէս էլ դերձակութիւնը՝ ընտանիքը տնտեսապէս ապահով դրութեան մէջ պահելու համար առատ աղբիւր չէր հանդիսանում. այնպէս որ դերձակ Ստեփանը (այդպէս էր Պոշեանի հօր անունը) հարիւ էր կարողանում մատների աշխատանքով ընտանիքի համար օրական հաց հայթայթել, և միևնոյն ժամանակ չէր զլանում պարապ ժամանակները որդիներին իր գիտցած այբուբենը սովորեցնել։ Բախտի բերմամբ Յովհաննէսը իր առաջին գրավարժութիւնը չէ սկսում նարեկի կամ ժամագրքի վրայ, այլ նրան վիճակում է այն ժամանակ ընդհանրացած տաճկահայոց բարբառով և նոր մեթոդով՝ պատկերազարդ այբբենարանը։

Փոքրիկ Յովհաննէսը անուշադրութեան չէ մատնուում Աշտարակ գիւղում. Մողնու վանահօր մօտ 12 տարեկան հասակում գրել, կարդալ, սաղմոս և նարեկ անգիր անցնելուց յետոյ, ուշիմ և ժիր յատկութիւնների շնորհիւ արժանանալով Ներսէս կաթուղիկոսի որդեգրութեան, մտնում է Ներսիսեան դպրանոցը։

Այդ թուականներին և դրանից առաջ մեր ազգի մտաւոր և հասարակական դրութիւնը ողբալի վիճակ էր ներկայացնում. քաղաքակրթութեան նշոյլն անգամ չէր երևում հայերիս մէջ և զրկուած հասարակութեանը խոր քնից սթափեցնող լրագրներից ու հասարակական շահերի նախանձախնդրութիւնից աւելի ոյժ էին տալիս խաւարի և տգիտութեան ծնունդ «անձնական կրքերի, անիրաւութիւնների, հարստահարութիւնների, մատնութեան, ոխակալութեան»։ Չկար իսկ կանոնաւոր վարժարան, որտեղ պահուէր ազգի թանկագին տարրը՝ լեզուն, միայն այս կամ այն խանութում խալիֆայական դասաւանդութիւնը տեղի էր ունենում մի քանի մանթ կոչուած տղաների համար. «ժողովուրդը ընկղմած խաւարի մէջ, բարոյապէս ընկած և ցաւալի դրութեան մէջ էր», գրում է հանգուցեալ Երիցեանը։ Այս կորըստաբեր մթնոլորտը դուցէ վատ ազդեցութիւն ունենար ուժասպառ հայի համար, եթէ քաղաքական հանգամանքների փոփոխութեան բարերար ազդեցութիւնը, երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսի հիմնած դպրոցը օգնութեան չհասնէին. վերջինս իր դռները բանալով հայ օտարախօս ուշիմ մանուկների առաջ և նրանց լեզու տալով ու ազգային զգացմունք ներշնչելով, ուղարկում էր թափուր մնացած գործունէութեան ասպարէզ, դէպի տգէտ ժողովուրդի գիրկը։ Ներսէս կաթուղիկոսը այս յուսով էր սրամիտ Յովհաննիսին որդեգրել և մտցրել դպրոցը 1852 թ. յունուարին։

Բարերախտաբար այդ ժամանակ տեսուչ է նշանակուում Շանշեանը, մի պատկառելի անձնաւորութիւն, որին, նայած վկայութիւններին, դպրոցը իր յառաջադիմութեամբ շատ է պարտական։ Նա իր համեստ բնաւորութեամբ, բարձր կրթութեամբ աշակերտների համար օրինակ էր հան-

դիսանում, միևնոյն ժամանակ կռուում էր վաստակած թշնամիների դէմ դպրոցի ուսումնական և տնտեսական մասի վերաբերմամբ։ Լինելով հաստատուն ընտանեաց տէր, բրիստոնեայ ոգով ներշնչուած հայ մարդ, վայելում էր կաթուղիկոսի համակրութիւնը, որով ձեռք է բերում դպրոցում նորամուտ կարգեր և անհրաժեշտ փոփոխութիւններ մտցնելու համար հզօր պաշտպան, միւս կողմից էլ հովանաւորում էր Յակովբ Կարինեանի պէս ուսումնասէր վարժապետներին, որոնք ամբողջ հոգով նուիրուած էին հայ մանուկների կրթութեան և դաստիարակութեան գործին։

Հակառակորդ թշնամիները արգելք եղան Շանշեանին շատ բան անելու, որոնց թւում խանգարուեց նաև բնական առարկաներ մտցնելու ծրագիրը, բայց դրա փոխարէն հիմնաւորապէս անցան եղած առարկաները, մանաւանդ կրօնադիտութիւնը և հայերէն լեզուն։ Այսպիսի անձնաւորութեան առաջնորդութեամբ սովորելով, Յովհաննէսը ձեռք բերից հայրենասիրութեան ոգի, հաստատակամութիւն, վարքի մաքրութիւն և կրօնապիտութեան մէջ խորը համոզում. այս վերջինը ոչ միայն Յովհաննիսի, այլ և միւս աշակերտների կողմից մեծ չափով արտայայտութիւն էր գտնում. Մեծ պահոց շաբաթ երեկոները Շանշեանի առաջնորդութեամբ աշակերտները քարոզներ էին կարդում։ Թշնամիները աշխատելով տապալել Շանշեանին՝ ոքնում էին այդ քարոզների մէջ հակա լուսաւորչական ուղղութիւն տեսնել և նրան բողոքական հրատարակել, բայց նա, ինչպէս երևում է, վհատող անձնաւորութիւններից չէր...։

Յովհաննէսը զգացմունքով քարոզ խօսողներից էր. ուստի քանի գնում աւելի ու աւելի էր սիրւում կաթուղիկոսից, բայց մի հանգամանք զրկեց նրան կաթուղիկոսի բաղցր հայեացքից, որից յետոյ սկսում են նրա համար չարքաշ օրեր։ Վերջին դասարանումն էր, երբ կաթուղիկոսի հաճութեամբ որոշուեցաւ բարձր դասարանի աշակերտներին ուրար տալ. Յովհաննէսը չէ համաձայնում, անշուշտ, կրօնական կոչման մէջ մտնելու ցանկութիւն չունենալու համար, և հէնց այդ օրուանից կաթուղիկոսի աչքից ընկնում է։

Ապարդիւն է անցնում Լազարեան Ճեմարան դնելու ցանկութիւնը և ոչնչանում են, համարեա, երիտասարդ Յովհաննէսի բոլոր ծրագրները. բայց և այնպէս նա որոշում է գիմնազիոն մտնել։ Սուղ միջոցները արգելք են լինում նրան շարունակելու ուսումը, ուստի ստիպուած թողնելով ուսումնավայրը, վերադառնում է հայրենիք։

Պռոշեանը սկզբում որքան յաջողութիւն էր գտնում՝ որքան շատ հայրական խնամք վայելում, այնքան յայժմ առանց արտնջելու ստիպուած էր տեղի տալ անողոք բախտի որոշումներին։ Վերադառնալով հայրենիք, տեսնում է իրենց ընտանիքի վատթար վիճակը, պարտքերի տակ ճընշուած եղբօր անմխիթար դրութիւնը, աշխատում է մի գործի կպչել, որպէսզի կարողանայ թեթևցնել իր պատճառած, առանց այն էլ սուղ միջոցներով ապրող մի ընտանիքի ծանրութիւնը։

Աշտարակում այդ ժամանակ մի դպրոց կար տիրացուներից մէկին յանձնած, որտեղ թագաւորում էր բացարձակապէս խալիֆայական սիստեմը իր բոլոր յատկանիշներով։ Պռոշեանն իբրև առաւագէտ, ժողովրդի ցանկութեամբ ընկերանում է տիրացուի հետ, բայց շուտով դպրոցը մնում է նորա խնամակալութեան ներքոյ, որովհետև տիրացու վարժապետը չկամեցաւ «գիտնական» մարդու հետ ծառայել։ Թէպէտ Պերճ Պռոշեանը *) մասամբ նոր կարգեր մտցրեց դասաւանդութեան մէջ, դպրոցի տնտեսականի համար հոգաբարձու ընտրել տուաւ, յամենայն դէպս մեծ յաջողութիւն չունեցաւ. երբեմն ստիպուած էր իր փայփայած մտքերին, Շանշեանից ժառանգած գաղափարներին ու կարգերին դաւաճանել։ Ուրիշ կերպ էլ չէր կարող, որովհետև հացի խնդիրն էր. «գոյութեան կռիւն էր ինձ տապնապի մէջ դնողը,

*) Թերևս Պռոշեանն իր իսկական անունը գիւղում եղած ժամանակը փոխած լինի, մանաւանդ երբ իմանում է որ, Պռոշեանի սերունդից է, որ ինքը Պահլաւիկ Գրիգոր Մագիստրոսի եղբօր որդի Պռոշից է (??), ուստի սկսում է գործ ածել Պերճ անունը, Պռոշեան ազգանունով։ Տես Կոռուածաղիկ 24, Յուշիկներ I, 5—12։

կամ պէտք է պառաւ ծնողիս և քոյրերիս օգնելու քաղցր պարտականութիւնից ձեռք քաշէի և կամ գաղափարից», գրում է նա և աշակերտների ծնողների պահանջմամբ տեսնում ենք Պոշեանին դարձած ամենախիստ կերպով ծեծող, պատժող, փալախայի ազդեցութեանը խնկարկող խալիֆայ ուսուցիչ։

Ուսուցչական պաշտօնը տրիթ է լինում Պոշեանին ի մօտոյ ծանօթանալու գիւղական բարքերին, սովորութիւններին. բայց ժողովրդական կեանքին մեծ չափով ծանօթութիւն բերից մանաւանդ այն ժամանակ, երբ Մողնու Վանքում նստող գործակալ վարդապետի քարտուղարը և հաշուապահը դարձաւ. նա էր կատարում բոլոր գրութիւնները, զանազան զեղծումների, գանգատների, ամուսնական խնդիրների քննութեանը կամ որոշմանը ականատես և մասնակից էր։ Թէ վարժապետութեան և թէ քարտուղարութեան պաշտօնում եղած ժամանակը Պոշեանը քիչ էր վաստակում, շատ քիչ վարձատրւում, սակայն բարոյապէս աւելի էր օգտւում, որովհետև միջոց ունեցաւ շատ մօտ ծանօթանալու Արարատեան դաւառի բնակիչների նիստ ու կացին, սովորութիւններին, աւանդութիւններին, որ յետոյ նրա երկասիրութիւնների էական մասը կազմեցին։

Շնորհիւ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանի՝ Պոշեանը նորից Թիֆլիս է գնում, որտեղ սկզբում յաջողւում է մասնաւոր դասեր ունենալ և յետոյ միևնոյն ժամանակ ռուսաց լեզուի ուսուցիչ լինել Ներսիսեան դպրոցի պատրաստական դասարանում։ Այս անգամ Թիֆլիսում մի կարևոր հանգամանք տրիթ եղաւ Պոշեանցին արտայայտուելու։ Դէպքի բերմամբ մտնում է նա իր համագիւղացի Յովհաննէսի տունը, ուր և ստանում է նոր հրատարակուած «Վէրք Հայաստանին» իբրև դրաղեցուցիչ գիրք մի երկու ժամուայ համար՝ տանտիրոջ բացակայութեան պատճառով։ Պոշեանը երկու անգամ իրար յետևից կարդում է այդ գիրքը և ամեն անգամ էլ կարելի էր նրա դէմքի վրայ կարդալ հոգեկան յուզուած գրութիւն, տխրութիւն, ուրախութիւն, որ ապացոյց է

խոսքը տպաւորութիւն ստացած լինելուն։ Հէնց այդ երեկոյ էլ Պռոշեանը իր հայրենակից բարեկամի առաջ երդւում է Արովեանին աշակերտելու։

Աշակերտ ժամանակ նա ոգեւորուած էր Արովեանի տեսքով, նրա կարգադրութեամբ ու քաղցր մտերմական յարաբերութեամբ, նրա վայելչանքներով, որից կարծես թեւեր էր ստանում թռչելու. այժմ էլ երիտասարդ Պռոշեանը ոգեւորւում է նոյն մեծ մարդու գաղափարներով, նրա նոր մտքերով և գրականութեան համար նոր ճանապարհ բաց անող գրքով։

Պռոշեանն իսկապէս Արովեանին հաւատարիմ աշակերտ եղաւ, կատարելով իր երդումը։ Յաջորդ երեկոներին նա նստում և գրում է «Սօս և Վարդիթերի» առաջին գլուխը, որը ներկայացնում է ուսուցիչ Կարինեանցին. համակրելի վարժապետը շատ է հաւանում այդ գրուածքը և խրախուսում է շարունակել. «Արովեանցը փակ լեղուդ բաց արաւ, Պռոշ, շարունակիր, չթողնես, նա իր Քանաքեռն անմահացրեց, դու էլ քո Աշտարակն անմահացրու»։ Հեղինակաւոր ուսուցչի գովասանքից խրախուսւած, Պռոշեան վերջացնում է «Սօս և Վարդիթերը» և տալիս տպագրութեան 1860 թ.։ *)

Այնուհետև Պռոշեանի գործունէութեան շրջանը ընդարձակւում է. նա հանդէս է գալիս իբրև գրող և հասարակական գործիչ։ Մեծ ջատագով և եռանդուն պաշտպան էր օրիորդաց կրթութեան գործին. նրա նախանձեռնութեամբ Թիֆլիսում, Շուշում և Ագուլիսում օրիորդաց դպրոցներ են բացւում. Թիֆլիսում միևնոյն ժամանակ «Կռունկ» ամսագրի խմբագրի օգնականի և սրբագրչի պաշտօն է կատարում։ Յատկապէս «Կռունկի» համար Հայաստանի գաւառները ճանապարհորդելու և տեսարաններ ու հնութիւններ նկարելու համար, սովորում է լուսանկարչութիւն, և թէպէտ իսկական նպատակին չի հասնում, բայց միջոց և

*) Սրանից առաջ գրած է լինում իր ուսուցչի հետեւողութեամբ մի ոտանաւոր «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ» (Մեղու Հայաստանի 1859 թ. № 16.)։

հնարաւորութիւն է ունենում սոված ժամանակը լուսանկարչութեամբ պարապելու։

Շանշեանի հրաւէրով Պոշեանը գնում է Շուշի, որտեղ երկար չի տևում նրա ուսուցչական գործունէութիւնը, որովհետև «սոորերկրեայ խարդաւանանքները, որ Թիֆլիսից սկսած հալածում են Շանշեաններին, քանդեցին նրա գործը և Շուշում, որով բոլորովին հեռացրին նրան ազգային ամայացած գործունէութեան ասպարիզից, որ խըղճմտանքի նման այնուհետև հեռուից սկսաւ փառամոլների և շահամոլների գործունէութիւնը դիտել»։ Պոշեանը չի վհատում այս լաված թակարդներից, նրա մէջ կենդանի գործունէութեան եռանդը մղում է ուրիշ տեղ, ուր մի առ ժամանակ կարող էր ազատ լինել չարասիրտ մարդկանցից, իսկ հայ ժողովուրդը դեռ պատրաստ չէր այդպիսի անձնանուէր երիտասարդներին իր գիրկը ընդունելու և նրան խնամելու, որովհետև դեռ խորթ էր նրա համար մի հնչին զոհողութիւն։ Պոշեանը մի առ ժամանակ թափառելուց յետոյ, անցնում է Ագուլիս և մի տարուց յետոյ թողնում է այդ վայրն էլ՝ դատապարտելով իրեն անգործունէութեան և մատնելով թափառաշրջիկ կեանքի։ Այդ թափառական կեանքի արդիւնքն է նրա «Շահէն» վիպասանութիւնը։ Եւ ահա երբ սկսում են նրա համար 1866—72 թ. չարքաշ տարիները, այսինքն երբ նա հեռացած է ուսուցչական իդեալական ասպարիզից և մատնուած թափառական կեանքին, լուսանկարչութիւնը միջոց է տալիս մուրացկանութեամբ չ'պարապելու, մինչև «Մշակի» հրատարակութիւնը, երբ Պոշեան սկզբում խմբագրութեան անդամ ընտրուեցաւ։

Պոշեանը երկար չգործեց այս ասպարիզում, որովհետև նրա գործունէութիւնը բոլորովին այլ ընաւորութիւն ունէր. չէ՞ որ նա խոստացել է Աբովեանին աշակերտելու. այս միտքը միշտ նրան ոգևորում էր և այժ տալիս արհամարհելու ամեն մի անյաջողութիւն։ Երբ անյաջող ելք է ունենում արտասահման գնալու խնդիրը, Վեհապետեան եպիսկոպոսի հրաւէրքով Աստրախան է գնում Թիմական Դպրանոցի տեսչի պաշտօնով, բայց որովհետև այդ երաղած

դպրոցը չկար, Պռոշեանը մնում է նորաբաց ծխական դպրոցում. իբրև Շանշեանի աշակերտ հայտնվելիս ևս հալածվում է և այս անգամ հիւրընկալվում է «Փորձ» հանդեսի խմբագրութեան մէջ։ «Փորձի» միջոցով գրական տպարկեղ է երևում, տալով մի քանի վէպեր՝ գլխաւորապէս Աշտարակի կեանքից՝ Կռուածաղիկ, Հայի խնդիր և Շահէն։ Այս շրջանին է պատկանում նրա «Ադասի» թատերգութիւնը, որը տպագրուած օրից արդէն իսկ մոռացուած է։

Պռոշեանը նորից ուսուցչական տպարկեղ է դուրս գալիս. նրան հրաւիրում են Երևանի թեմի գպրոցների տեսչի պաշտօնով, որտեղ էլի հնարաւորութիւն է ունենում Արարատեան նահանգի ժողովրդի բարքերը կատարելապէս ուսումնասիրելու։ Տեսչական գործունէութիւնը *) վերջանում է գպրոցների փակումով, որից յետոյ Պռոշեանի համար սկսում են ամենասոսկալի օրերը. հարիւրաւոր հայ մանուկների դատարակը ստիպուած է լինում ծխավաճառութեամբ պարապելու, որպէսզի մուրացկանութեան հանապազորդը չբռնի։ Սակայն այս անտանելի դրութիւնը երկար չի տևում, 1887 թ. ուսուցչութեան պաշտօնով Ներսիսեան գպրոցն է հրաւիրում, ուր մինչև 1900 թ. անձնուէր ուսուցիչը դասաւանդում էր Հայոց լեզու և կրօնագիտութիւն, իսկ պարապ ժամերը պարապում է գրականութեամբ և «Մուրճի» հրատարակութեամբ նորից տպարկեղ է գալիս և տալիս է Ցեցեր, Ցունոն, Բղէ, Սկիզբն երկանց վէպերը։

Բացի այս վէպերից, Պռոշեանը պարապել է նաև թարգմանութեամբ։ 15 հատ մեծ ու փոքր երկեր է թարգմանել, որոնցից 9-ը բարեգործական ընկերութեան առաջարկութեամբ։

Պռոշեանը ունեցել է նաև հրապարակախօսական գործունէութիւն. զանազան տարբերութեամբ մասնակցել է Մեղու, Մշակ, Արձագանք, Նոր-դար թերթերին և Հանդէս պատմական ու գրական, Լումայ, Տարազ, Մասիս և Բանասէր հանդէսներին, որոնց մէջ տպագրել է գլխաւորապէս փոքրիկ պատկերներ գիւղական կեանքից, ուսանողութիւնից և կամ զանազան յիշողութիւններ։ Պռոշեանը մեռաւ նոյեմբերի 25-ին՝ 70 տարեկան հասակում։

*) «Ցունոն» վէպը այս շրջանի արդիւնք է,

Բ.

Վերածնութեան շարժումը 50-ական թուականներին։—Աբովեանի «Վէրք Հայաստանի»։ Պոշեանը հետևող նրան։—Պոշեանի հայեացքը վիպասանութեան մասին։ Վիպասանի կեղծ դրութիւնը վէպերի անբնական տեսարանների նկատմամբ։ Պոշեանի պատմական կոչուած ռոմանները.—Վ. Սկոտտ իբրև բնական ներկայացուցիչ գրականութեան այդ ճիւղին։—Պոշեանի պատմական ռոմանների նիւթը. տիպերի և գործողութիւնների անբնականութիւնը։

Պոշեանի հանած երկու տեսակի՝ բարի և չար բնաւորութիւններ.—Ղեոնդի, տ. Մելիքսէթի և Խէչանի բնաւորութիւնները իբրև պատկեր նրա հանած տիպերի։ Վէպերի մէջ գեղարուեստի բացակայութիւնը, նրանց հերիաթային բնաւորութիւնը. աւելորդաբանութիւններ. հրապարակաբանական բնաւորութիւն։ Վիպասանի անհոգութիւնը վէպերի նկատմամբ։ Եզրակացութիւն։

Վերածնութեան շարժումը մեր մէջ, թէև սկսուել էր շատ առաջ, բայց շատ ուշ պտուղներ տուեց։ 19-րդ դարու առաջին քառորդից կամաց-կամաց սկսել էր ալեծին տալ և միայն յիսունական թուականներին բռնկուում է միանգամից նոր այժով և հանդէս գալիս, համաբեան, իր բոլոր կողմերով։ Նոր քնից զարթնում է հայը, տեսնում է իրեն մերկացած և նեղ շրջանում պարփակած, անհրաժեշտութիւն է զգում արմատապէս փոխուելու, քանդելով իր այդ անձուկ կեանքի սահմանները։ Լուրջ ուսումնասիրութեան է առնում իր ընթացքը, ուսումնասիրութեան ենթարկում կեանքը և սերունդ կրթելու համար միջոցներ ձեռնարկում. որովհետև մինչև այդ՝ մառամը կեանքի, գոյքի անապահով դրութիւնը և դրանից առաջացած մեծամեծ չարիքները, պանդխտութիւնը, կրօնական կնճռոտ խնդիրները ֆիզիքապէս և մտաւորապէս մաշուած հային արդելք էին լինում զէթ մի անգամ իր կեանքը քննելու մասին մտածելու և զէպի կորուստ տանող անդունդի մօտիկութիւնը զգալու։ Ճիշտ է, այս մեսերային դրութիւնը երբեմն խանդարում էր ուժեղ կամքի և բնականից օժտուած անհատների շնորհիւ, բայց բուժիչ սպիտակի լինել չէին կարողանում այն վէրքին, որ երկար ժամանակ տանջում, մաշում էր հային։ Բաց անել այդ

միջնադարյան դրութեան մէջ թաղնուած կեղտերը, սպանիչ թոյները, երեսն հանել պակասութիւնները, ցոյց տալ կենսատու լոյսը, միայն կարող էր անել պարբերական մամուլը։ Ծանօթացնել անցեալի հետ, ազգային գիտակցութիւն առաջ բերել, սերունդ կրթել առաջաւոր ազգերին հետևելով, կարող էր անել միայն դպրոցը. և մենք, թէև պակաս չափով ունէինք և մամուլ և վարժարան, բայց երկուսն էլ խալիֆայական էին, երկուսն էլ զուրկ ներգործող ոյժ ունենալու զօրութիւնից։

Հայերս մի ընդունակութիւն ունինք շատ շուտով ընդօրինակելու մի նոր բան՝ լինի այդ ուրիշ ազգերի մէջ տարիների ընթացքում արեան գնով ձեռք բերած, կամ հանճարների մոգական գաւազանի հարուածով առաջացած և կամ թէ մարդկութեան տկանքի հնարած։ Այս երևոյթը ունի իւր առաւելութիւնները և պակասութիւնները, բայց վերածնութեան ժամանակ գոնէ բարերար ազդեցութիւն ունեցաւ։ Յարաբերութեան սահմանը ընդարձակելով և հետզհետէ օգտուելով Եւրոպական քաղաքակրթութիւնից, կարճ ժամանակում մեծ յեղափոխութիւն է սկսւում մեր մէջ, առաջ բերելով նոր գաղափարներ, նոր աշխարհայեցողութիւն։ Այս նոր աշխարհայեցողութեան համար բաւականութիւն չէր կարող տալ հինը, որը կամ թերի էր կամ անյարմար և կամ անպէտքացած։ Անհրաժեշտութեան պահանջներին միայն հոգևորականները չէին կարող բաւականութիւն տալ իրենց մենաշնորհ իրաւունքով՝ գրաբար լեզուով, ուստի ասպարէզ են գալիս նաև աշխարհականները նոր, հասկանալի, բոլորին մատչելի լեզուի հրահանգով և անհրաժեշտ պակասութիւնները լրացնելու տենչով։

Այս նորամուտ տարրերի ազդեցութիւնը, նոր ասպարէզ եկող երիտասարդների գործունէութիւնը, Եւրոպական կեանքի հետ ունեցած շփումը բացի կեանքի և հետևապէս դրականութեան վրայ ազդելուց, կերպարանափոխ են անում մեր լեզուի մասին ունեցած գաղափարը։ Նոր շրջան է սկսւում, նոր կեանք ստեղծւում, ուստի սրանց համապատասխանող նոր լեզուի կարիք է զգացւում, որ ժողովրդի

մեծամասնութեանը հասկանալի լինէր։ Այս գաղափարը, մնա անյայտութեան մէջ էր մեր վերածնութեան գործի առաջնորդների համար, այժմ ծագում է մեծ թափով, որով և գրագիտութիւնը հնարաւորութիւն է ստանում վանքերի պատերից դուրս աշխարհականների համար մատչելի դառնալ։ Գրաբարը կարծես կապել էր մարդկանց լեզուն, կաշկանդել էր ազգի բանաստեղծական տաղանդը, և իզուր չէ, որ Արովեանը ասում է. «լեզուս բաց ա էլել իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրելն ազգ», ուրեմն աշխարհաբար լեզուի հետևանքը պիտի լինէր լեզուի կաշկանդումից ազատուելը, հետևապէս և գրականութեան բեղմնաւորումը. և իրօք, աշխարհաբարը ոչ միայն այդ է անում, այլ և իր հետ բերում է նոր գաղափարներ, նոր հասկացողութիւններ, որովհետև այն կրօնասիրութիւնը, որ առաջ էր գալիս մեծ մասամբ կրօնական գրքերի վրայ դաստիրակութիւն ստանալուց, պակասում էր, հետզհետէ տեղի տալով հայրենասիրութեան և այլ գաղափարների։

Հետզհետէ բեղմնաւորուող արևելեան մեր գրականութիւնը հակառակ արևմտեանի՝ իր սկիզբը դնում է ժողովրդի կեանքի և հայրենիքի ուսումնասիրութեան վրայ։ Բանաստեղծութիւնը իր զգայմունքի և մտածողութեան աղբիւր գտնում է ժողովրդի կենցաղի և նրա մտաւոր աշխարհի հարստութեան մէջ. գրականութիւնը ունենալով այդ ձգտումը, աշխատում է ժողովրդական կեանքի պակաս, թերի կողմերը ցոյց տալ, ուղղել և քաջալերել լաւ կողմերը, որով և ստանում է մի տեսակ տենդենցիոզ բնաւորութիւն։ Այսպիսի բնաւորութիւն ստանալու պատճառը և միևնոյն ժամանակ աշխարհաբարի քաղաքացիական իրաւունք տուողը եղաւ Խ. Արովեանը իր «Վէրք Հայաստանի» դիւցազներգութիւնով։

«Վէրք Հայաստանին», որպէս մի նորանշան երևոյթ մեր գրականութեան համար, մի ծաղիկ խոպան անդաստանում, մեծ ընդունելութիւն գտաւ, և գնահատողը ոչ միայն մի քանի հոգի եղան, այլ քիչ թէ շատ գրագէտ անհատների մի ամբողջ խումբ, որոնք առաջին անգամն էին պատա-

հում այդպիսի բուռն զգացումների արտայայտութեան։ Թէ-պէտ այս գրուածքը գեղարուեստական տեսակէտից շատ թոյլ է, բայց իր մէջ ամփոփող զգացումները այնքան խորն են, այնքան հարազատ և անկեղծ, որ ամեն մի ընթերցողի վրայ ազդեցութիւն է թողնում, և ընթերցողը տեսնելով, որ իր զգացումներն են արտայայտած, իր ցաւն ու վիշտը երգած, անբաժան ընկեր է դարձնում։ Մի կողմից «Վէրք Հայաստանին» ողբերութիւն է առաջ բերում իր դաղափարով և իդէայով, միւս կողմից էլ ճանապարհ է բաց անում դէպի գրական ասպարէզ այն մատաղ սերնդի համար, որ դեռ կրթւում էր դպրոցում։

Արովեանի առաջին աշակերտը եղաւ Պոշեանը, որը գրական ասպարիզում համեստ գործունէութիւն ունեցաւ։ Արովեանը ռոմանտիկ դպրոցին է պատկանում և նրա «Վէրքը» գրուած է նոյն ուղղութեան ազդեցութեան տակ. իսկ Պոշեանը, մասամբ, ռէալիստ է, թէպէտ երբեմն ընկել է ռոմանտիկ դրութեան մէջ, մանաւանդ ա. շրջանում։ Երկուսի ցանկութիւնն է եղել, որ ժողովրդին մատչելի գրականութիւն տան նրան ազնուացնելու համար, բայց այդ ցանկութիւնը իրագործելու միջոցները տարբեր են։ Արովեան իւր նպատակին ուղեցել է հասնել թշնամի մահմեդականների վրայ ատելութիւնը կենդրոնացնելով և դէպի ժողովրդի հերոսները սէր տածելով, իսկ Պոշեանը ժողովրդին ազնուացնելու համար անկեղծութեամբ ազգութիւնները բեմ է հանել իւր կարողացածին չափ, պախարակել է և միևնոյն ժամանակ արժանիքները հանդէս բերելով խրախուսել (հմմտ. Մուրճ։) Պոշեանը ունի humor և այս յատկութեան շնորհիւ է, որ յաջողել է նրան հեգնել ժողովրդի կեանքի թերութիւնները, բայց դժգոհաբար այս հեգնութիւնը ոչ մեծ թափով և ոչ էլ մեծ չափով է արտայայտուել և շատ տեղ նոյն իսկ հեգնութիւնը նրան չի յաջողուել «օր» «Հայի խնդրի» մէջ Ռամազանի և Շահազիզեան կամաարականների նկարագրութիւնները։

Պոշեանն իր ուսուցչից այսքան տարբերութիւններ ունենալով, միևնոյն ժամանակ, ասում ենք, հետևող է նրան, որովհետև «Վէրք Հայաստանին» նրա համար օրինակ է

ծանոթել. Աբ.-վեանը գրել է նոր լեզուով և նոր նիւթ է մշակել մեզ համար բոլորովին նոր ձևով և նոր եղանակով և այս մի քանի «նորերին» է հետևել նա. բայի գրանից առաջին շրջանի գրուածները կրում են «Վէրքի» ազդեցութիւնը՝ գլխաւորապէս Կռուածազիկ։

Պոշեանը տեսնելով, որ Վէրք Հայաստանին անմատչելի է Քանաքեռը, ցանկացաւ անյայտութեան մէջ չթողնել Աշտարակը, կարտեան վտանգից ազատել իր ծննդավայրի հնաւանդ սովորութիւնները, որովհետև «բազմաջան Ա. Արովեան ուսումնականը զգալով անշուշտ ազգի աւանդութիւններն ու ծէսերը կենդանացնելոյ կարևորութիւնը, գրելոյ իր Վէրք Հայաստանին արդիւնաւոր շարադրութիւնը, նկարագրելով նրա մէջ Երևանի նահանգի Քանաքեռ գիւղի լեզուի դարձուածքը և տեսային մի քանի սովորութիւններ... Սա առաջինն եղաւ, որ մի գիւղացուի ձեռքով ընծայեց մեր ազգին իր տատին կենաց նկարագիրը... թէ չէ եղել Ազատին կամ թէ եղել է մի անհնան ամն, հոգ չէ. Ազատու վրայ պատմուածներն ամենն հայ մարդու յատկութիւնն է։ Հայն այդ ամենը իր օրօրոցի մէջ իւր մօր կաթի հետ է ծծել... («Սօս և Վարդիթեր. 2-րդ տպագրութիւնն. յառաջաբան»)։ Դնահատելով Արովեանի այս ուղղութիւնը, նոյն տեղ ասում է, որ ինքը սիրահարուած է մեր հայրենի թողած աւանդութիւնների վրայ, երգում է «իր տկար կարողութեամբ հայրենեաց սովորութիւնքը, վարքն ու բարքը եւ այլ այսպիսի արտաքին ծէսեր, բայց դիտաւորութեամբ գրուածքը ախորժալուր առնելու համար սիրելի ազգի թէ մեծին եւ թէ փոքրին եւ տեսնելով կոյս սիրոյ արքութիւնը, երկու կուսից միջնորդութեամբ պատմում է Աշտարակ գիւղի սովորութիւնքը, ի մէջ բերելով աւանդաւորը եւ շեշին համարած արարողութիւններն առանց զանազանելու լաւն ու վատը»։ Եւ յիրաւի, Պոշեանը իւր այս խոստումը կատարում է, տալով իր վէպերի մէջ Հայաստանի մի գաւառի 50-տարեան թուականների գիւղական կեանքը, բարքերը և աւանդութիւնները ու սովորութիւնները։

Այսպէս ուրեմն, մեր վիպասանի համար թանկագին են

ժողովրդի սովորութիւնները և ժողովրդական կեանքը, իսկ վէպի հերոսը կարող է երկրորդական նշանակութիւն ունենալ, որովհետև «ախորժալուր առնելու» համար է սիրոյ պատմութիւն անում, ուրեմն «վիպական ձևի գոյութիւնը անհրաժեշտ է այն չափով, որքան նպաստում է սովորութիւնների նկարագրութեան»։ Վիպասանութեան մասին այս խղճալի հայեացքը միայն առաջին մի քանի վէպերին յարմար է գալիս, որովհետև այս նեղ գծած սահմանում չէ մնացել. փոխելով աշխարհայեցողութիւնը, փոխել է, ըստ երևոյթին, և վիպասանութեան մասին ունեցած կարծիքը։ Այս տեսակէտից նրա վիպագրութիւնը կարելի է երկու շրջանի բաժանել. մէկ այն շրջանը, երբ զբաղուել է Աշտարակով և երկրորդ՝ որտեղ արձագանք են գտել ժամանակակից մի քանի դէպքեր և դաղափարներ։ Յամենայն դէպս կտրուկ բաժանում էլ չի կարելի անել, որովհետև վիպասանը մինչև վերջն էլ վէպերի մէջ կամ առանձին գրքոյկով նկարագրել է ժողովրդական կեանքի զանազան երևոյթներ։

Մի անգամ դաղափար կազմելով Պոշեանի այսպիսի հայեացքի մասին, մեզ համար պարզուում է, թէ ինչպիսի դիրք բռնած պիտի լինի վէպի գեղարուեստականութեան և նրա մէջ գործող անձերի նկատմամբ։ Պոշեանը լինելով մասամբ իրականեան (реализмъ) դպրոցի հետևող, ոչ թէ գիտակցաբար, այլ հանգամանքների բերմամբ, և ունենալով սուր դիտողութիւն, գիւղական համայնքից ընտրած հերոսներին նկարագրում է այնպէս, ինչպէս իրօք նրանք կան. նա չի էլ մտածում, որ հերոսը բնաւորութեան ամբողջութիւն, հոգեբանական զարգացում պիտի ունենայ, այլ ինչպէս իրականութեան մէջ են, որի շնորհիւ գլխաւորապէս երկրորդական բնաւորութիւնները բնական են դուրս եկել։ Կարդում ես Սօս և Վարդիթեր, Հացի խնդիր և այլն, առաջդ բացուում է նահապետական կեանքով ապրող հայ ընտանիք. նկարուում է ընթերցողի առաջ նրանց պարզ յարաբերութիւնները, իրար սիրելու և օգնելու տենչը, երիտասարդների չարաճճի խաղերն ու խօսակցութիւնները։ Դրա փոխարէն, երբ այս շինական կեանքում ապրողներից մէկին

Սիրուն 573

նա ընտրել է վէպի հերոս և աշխատել է զանազանել միւս-նրից, ոյժ է տուել երևակայութեանը, բայց վերջինս ստեղծագործական զօրութիւն չունենալով, կեղծութեան մէջ է ձգել նրան։

Եթէ ի նկատի չառնենք «Սօս և Վարդիթերի» փոքրիկ անբնական տեսարանները, բաւական է յիշել այն անբնական դրութիւնը։ որի մէջ ընկել էին երկու սիրահարներ ծնողներից բացասական որոշում ստանալուց յետոյ։ Սօսը ոտաբոբիկ թափառում է ցրտաշունչ ձմեռուայ օրերին լեռներում. սառոյցների վրայ է սահում, սառն ջրերի մէջ լողանում և ապա վայրի կենդանիների հետ կուում. թէպէտ մահ է խնդրում, բայց էլի չի զլանում ձիւնի տակից խոտ հանել իր թշուառ գոյութիւնը պահպանելու համար։ Այս բոլորը անելուց յետոյ Սօսի գոյնը չի փոխւում կամ առողջութիւնը չի խանգարւում և միայն երկու շաբաթից յետոյ Գարեգինի յորդորմամբ տուն է գալիս։ Տանը, երբ լսում է Վարդիթերի մահը, խորը հոգւոց է քաշում և խնդրում է Գարեգինին «որ իրար կշտի թաղել տայ, իր մօր մխիթարէ, եղբարցը ինաս բարով ասէ, ինքն ուրախ կենայ», յետոյ աչքերը վերև է բարձրացնում, աղօթք անում և հոգին աւանդում (?)։ Վարդիթերը մեռնելիս նոյնպէս Սօսի ցանկութիւնն է յայտնում։ Անբնակութիւնը ակներև է, որովհետև Սօսը և Վարդիթերը կաթուածահար չեն եղել, նոքա թէ մտածում, թէ տեսնում, լսում են և թէ կանոնաւոր դատողութիւնն ունին. (հմմտ. Հ. Գր. և Պատմ.) այս կերպ իսկոյն անհասկանալի է լինում երևակայութեան ոյժով ստեղծած շինծու դէպքերը։ Շողիկը (Բղդէի մէջ) մի գիւղացի աղջիկ, դեռ չպսակուած, այնքան համարձակ է գտնւում, որ դէն է շպրտում ամօթխածութիւնը, կոխոտում է հնաւանդ սովորութիւնները և մօր ձեռքից փախչում է հիւանդ պառկած նշանածին տեսնելու համար. դեռ սա բաւական չէ, նոյն Շողիկը խնդրում է հիւանդին շրջապատող կանանց հեռանալու, որպէսզի մենակ մնայ նշանածի մօտ, և նոյն իսկ բարձր ձայնով իր սէրն է յայտնում ու վերջին համբոյրով մահուան կնիքը դրոշմում ամուսնու ճակատին։

ԼՈՍԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՐԸ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻՍՏ

Միհնոյն Շողիկը եկեղեցում պսակուելիս, քահանայի հարցին՝ «որդեակ իմ, մինչև 'ի մահ հնազանդ ես», գիւղական աղջիկը չի բաւականանում գլխի բացասական շարժման պատասխանով, այլ անարգանք ու խայտառակութիւն է թափում նորապսակի գլխին հօր և առաջին նշանածի մահուան պատճառ բռնելով. աղջիկը իր երկար ատենաբանութիւնից (?) յետոյ ձգում է երեսի քօղը, փախչում, բարձրանում է մատուռի պարիսպը և այնտեղից ընկնում սրածայր քարերի վրայ։ Եւ այս բոլոր ստեղծագործութիւնը, անշուշտ, նրա համար է, որ Բզդէին բերէր մատուռ ուխտաղրժութեան հիանանքը ցոյց տար, սուրբի ազդեցութիւնը յայտնի անէր։ Վերջին գրուածքի «Յունօնի» մէջ՝ աւազակ Նադօն ընթերցողին անյայտ պատճառներից փոխում է իր ընթացքը. և հոգեբանական այդ փոփոխութիւնը վիպասանն ուզեցել է արտայայտել մի երկար մենախօսութեան մէջ. Նադօն նստած է մի քարի վրայ, իսկ ոտքերի մօտ ճանապարհորդը, որը լսում է Նադօյի մենախօսութիւնը (302—316 էջ)։ Հետաքրքիրն այն է, որ Նադօն չի նկատում ճանապարհորդին։ Ա՜յդքան էլ համբերութիւն, այդքան էլ միամտութիւն... Անբնական է և այն տեսարանը, երբ Ներսէսը (Կռուածաղիկ) նշանածի ձեռքից բռնած գնում է պսակուելու, յանկարծ սառնութեամբ հրաժարւում է հարսից և մեծ յօժարութեամբ Վարդին տալիս և այլն և այլն։

Այսպիսի շատ անբնական գործողութիւններ և տեսարաններ գլխաւոր գործող անձերի կեղծութիւնը ակնյայտնի են դարձնում։ Շինծու կեղծ բնաւորութիւններ են Պռոշեանի պատմական ռոմանների, եթէ կարելի է իսկապէս պատմական անունը տալ, հերոսները։

Պռոշեանի պատմական վիպասանութիւնները՝ Կռուածաղիկ, Շահէն, առաջ են եկել նոյնպէս Աբովեանի ազդեցութեամբ, որովհետև Վէրք Հայաստանին ինքն ըստ ինքեան պատմական բնաւորութիւն էլ ունի, որով անմահացրած ենք տեսնում նշանաւոր ժամանակակից պատմական դէպք՝ Ռուսաց յաղթանակը պարսիկների վրայ։ Նոյն ժամանակից է առնում Պռոշեանը իր նիւթը, միայն այն տար-

բերութեամբ, որ Արովեանի երևակայութեամբ ընտրած հերոսը ներկայացուցիչ էր Ռուսաց հովանաւորութեան տակ մտնելու ջերմ փափագողների, իսկ Պռոշեանը պատերազմի մէջ մասնակցող հերոսին՝ Ներսիսին։ (Հմմտ. Մուրճ)։ Ը

Պատմական ռոմանը, իսկապէս առաջ եկաւ 19-րդ դարու սկզբում ռոմանտիկ դպրոցի ազդեցութեամբ։ Մի տեսակ սէր է զարթնում Եւրոպայում վերադառնալ դէպի միջնադարը, ուսումնասիրել անցեալը որքան կարելի է ճշտութեամբ. բայց ինչքան էլ աշխատում էին հոգով ու մտքով պանալ դէպի անցեալը, թաղուել հնութեան մէջ և իսկականը նկարագրել, չէր յաջողւում, որովհետև ներկայի ազդեցութիւնից խուսափել չէին կարողանում։ Միայն անգլիացի ռոմանիստ Վալ՛տեր Սկոտտը պատմական վէպի իսկական ներկայացուցիչը եղաւ, որը միջնադարը ներկայացրեց այնքան պարզ, որքան ներկան։ Նա իր առանձնասնեակը աշխատում էր զարդարել միջնադարեան ձևով, միջնադարեան իրերով, իր ամբողջ էութեամբ թափանցում էր անցեալը և ըստ կարելւոյն աշխատում էր իսկականին մօտենալ, ուստի «Վ. Սկոտտի պատմական տիպերը բոլորովին տաքարիւն, զգայուն, կենդանի, հոգերանօրէն ճշմարիտ են. իսկ նրանց կեանքի հանգամանքները ստեղծում էր ինքը բանաստեղծական զուարճութեամբ, օգտուելով կեանքի անհամար երևոյթներից»։ Ռոմանտիզմի ծնունդ այս վիպասանը պահել է շկոլայի որոշ յատկութիւնները՝ նախ՝ տեղական գոյն՝ մի առանձնայատկութիւն, երբ երևան է գալիս երկու ազգեր իրար հետ համեմատելիս, այսինքն բանաստեղծն այնպէս է գրում, որ ընթերցողը իմանում է ինչ ազգից վերցրած լինելը։ Ինչպէս իւրաքանչիւր անհատի մէջ անխառն շաղախ են կազմում անհատական, ազգային և հանրամարդկային կողմերը, այնպէս էլ անրաժան պիտի լինեն և արուեստի մէջ։ Երկրորդ՝ ժամանակի գոյն, այսինքն բանաստեղծը աշխատելու է տարբեր ժամանակների, ուրեմն տարբեր սերունդների ներքին և արտաքին յատկութիւնները զանազանել, այսինքն ամեն մի սերունդ իր ժամանակի ոգուն համապատասխան պիտի ներկայացուի։ Այս

տեսակէտից մեր վիպասանները բաւական խեղճ են։ Վերցնենք օրինակ Բաֆֆուն, որը ամենասիրուած վիպասանն էր, նրա Դաւիթ բէգը և Սամուէլը ամեն բանով իրար ժամանակակից են, չնայած որ մէկն ապրել է 18-րդ դարում, իսկ միւսը 4-րդ դարում, այս դեռ բաւական չէ, այդ հերոսները իրենց մտածողութեամբ, իրենց գործունէութեամբ հեղինակին իրեն ժամանակակից են, ուրեմն 19-րդ դարու կեանքի համապատասխան հերոսներ են։

Աւելի վատ է արել Պռոշեանը. մեր վիպասանի պատմական տիպերը իսկականի տուներն անգամ չեն կազմում. այստեղ պահուած են միայն անունները և այն աւանդութիւնները, որ մնացել են այդքան մօտ ժամանակից։ [illegible] ցանկացել է «սրանից մի դար յառաջ բերդս հայերեր մեծ մարդկանց յիշատակներն անմահացնել, որոնց մէջ գլխաւոր տեղերից մինն անպատճառ պատկանելու է Հայոց ազգի գլուխ երջանկայիշատակ Ներսէս Ե. հայրենակից Աշտարակեցի կաթուղիկոսի մանկական անմեղ տարիներին»։ Իբրև ապրիւր ծառայել են Սիմէօն կաթուղիկոսի աշխատութիւնները և Ներսիսի գրութիւնները, որ ձեռք է բերել Յարութիւն Շահազիզեանցի շնորհիւ, «իսկ անսպառելի ապրիւր ինձ եղել են ի մանկութենէ մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծննդեան տեղի ծերունիներից լսածներս, որոնցից շատերը խորին ծերութեան հասած՝ ականատես են եղել շատ իրողութիւններին։ Ինչ կարծիք, որ վիպասանութեան պայմանին համաձայն թոյլ տուած է նոր արկածներ։ Ժամանակագրական ճշտութիւնը ես չեմ ուզեցել և չէի էլ կարող անաչառապէս հետևել։ Ներսիսի ծննդեան տարիքը մինչև այսօր էլ պատմաբանական փաստերն անգամ տարաբանում են իսկապէս հաստատել։ Մանկական յիշողութեանս մէջ տպուածներն այսօր հայ ընթերցասէր դասին եմ նուիրում։» «Յառաջաբան. հմմտ. Կռուած. էջ 333)։

Թէպէտ պատմական դէմքերը հեռու չեն վիպասանից, այնուամենայնիւ իդեալացրած են անբնականութեան չափ։ Վիպասանը ժողովրդի չափազանցրած աւանդութիւններին և

զրոյցներին քննադատութեամբ չէ վերաբերուել, ուստի ընկել է կեղծութեան մէջ։ Հերակլ թագաւորը, Սիմէոն կաթուղիկոսը երկնքից իջած ազատարար հրեշտակներ են և բարի են դէպի իրենց ստորագրեալները կամ հարեան ազգերը։ Խօսում են փոքրերի հետ մեծ հաճութեամբ և նոյն իսկ խորհուրդներ հարցնում։ Մանուկ Ներսէսը, որը ամենից շատ է զբաղեցրել վիպասանին, կաթուղիկոսութեան ժամանակուայ գործունէութիւնը իր մէջ ամփոփող վաւերական պատանի է ներկայանում. նա աչքի է ընկնում իր հանճարով, խօսում է այնպիսի բաների մասին, որ հաւատալու ոչ մի հնար չկայ. օր. ութ տարեկան Ներսէսը Հերակլ թագաւորի առաջ (երբ վերջինս Աշտարակումն էր) քաղաքականութիւնից է խօսում, ապագայ գործունէութեան համար ցնցիչներ պատրաստում։ Հայերի հանդէպ ի դրական դէտ մանուկը, որ ձգտում է մեծ լուսերի, գիւղում ոչ մի աչքի ընկնող գործունէութիւն չէ ցոյց տալիս։

Անկենդան են Շահէնի միջի պատմական անձնաւորութիւնները, որոնք ընթերցողի առաջ պարզ չեն ներկայանում, այլ գրանց անունների տակ առաջ է բերուած բոլոր լսած աւանդութիւնները։ Պասկևիչը քաղաքագէտ զօրավար է երևում. տեսնելով հայերի սիրալիր ընդունելութիւնը Պարսկաստանում, օգտւում է հանգամանքից և գաղթելու համար նախապատրաստում. հրաւիրում է յատկապէս այդ նպատակը իրագործելու համար հրամանատարի պաշտօնով զնդապետ Լազարևանին և սրա միջոցով ի կատար ածում այն քաղաքականութիւնը, որ Պետրոս մեծից սկսած Ռուսաց կայսրների համար անհրաժեշտ պահանջ էր դարձել— աշխատաւոր հային գաղթեցնել և խառնել ռուսների հետ, որպէսզի հայն իր եռանդով և աշխարհաշինութեամբ օրինակ լինի։ Այս հասարակ պատմութիւնը ժամանակ չի կարող պատկերացնել և կամ այս ակամայից հանդէս եկած պատմական հերոսները ոչ թէ ոգի առած կենդանացրել են անցեալը, այլ իրենց շուրջ են ժողովել աւանդութիւնների մի կոյտ։ Եւ եթէ միւս գրուածները ժողովրդական սովորութիւնների շտեմարան են, պատմական վէպերը պատ-

մական աւանդութիւնների ամբար են, ինչպէս պ. Քարամեանն է նկատել, որ վէպին աւելի վնասել են, քան թէ ճոխացրել։

Միւս ոչ պատմական դէմքերը թէ այս և թէ միւս վէպերում անհամեմատ բարձր են և բոլորին կարելի է երկու խմբի բաժանել. բարի, ազնիւ և դրա հակառակ՝ չար, մատնիչ, ազգագործան, և իւրաքանչիւր վէպում հակադրութեամբ հանած են այս բնաւորութիւնները, խիստ հետևողական լինելով Զօրասարի դուալիզմ վարդապետութեան։ Սակայն առաջի տեսակի բնաւորութիւնները այնքան էլ պարզ և որոշ չեն, որքան բացասական տիպերը. այս հանգամանքը նրանով գուցէ բացատրուի, որ մեր կեանքի մէջ, աւելի շուտ վիպասանի շրջանում պակասում էին կամքի ոյժով, քաջութեամբ և դրական կողմերով գործող անհատներ. Պռոշեանը իրրև իրականութիւնը արձանագրող, եղածը պիտի մեզ տար, իսկ իրականութեան մէջ բացակայում էին այդպիսի դէմքեր. ինքը վիպասանն էլ չի կարողացել իր թոյլ երևակայութեամբ ստեղծել, ուստի բացասական տիպեր մեծ չափով են հանդէս եկել։ Բացասական բնաւորութիւնների շարքում, կարծես դիտմամբ, գիւղական քահանաները աւելի ղղուելի և խղճալի են նկարուած, քան աշխարհականները, իրենց հասկանալի պատճառով...

Բնաւորութիւնները առաքինի կամ արատաւոր լինելով, անբնական են թւում հոգեբանական տեսակէտից. շատ քչերի մէջ երկբոյդ կողմը թոյլ կերպով մէջ է բերած։ Առհասարակ հերոսները խորը հոգեբանութիւն չունին, որովհետև հեղինակը անզօր է եղել մտնելու մարդկանց ներսը, քննելու նրանց սրտերը։ Հերոսները համարեա չունեն կրիտիքական վայրկեաններ և սրա գլխաւոր պատճառը այն է, որ գործող անձերի բնաւորութեան զանազան գծերի զարգացումը երևոյթներով չէ պարզած. օր. նրա հերոսը համեստ է, քաջ, խելօք, շնորհալի, եկեղեցասէր և այլն, և այս բոլորը իմանում ենք հեղինակի պատմածից և ոչ թէ մենք ենք եզրակացնում,

Այս տեսակէտից Ղևոնդի բնաւորութիւնը (Կոուածաղիկ) քիչ շատ հետաքրքրութիւն է զարթեցնում, որովհետև

մասամբ հեռու է միակողմանիութիւնից։ Ղևոնդը մանկութիւնից չար բնաւորութիւն ունի. հայրը գուշակում էր, որ որդին շատերի համար թշուառութեան պատճառ պիտի լինի, և իսկապէս Ղևոնդը ամբողջ Աշտարակի համար իբրև պատիժ էր ծնուել։ Բայց նրա մէջ մեռած չեն հայրական և ամուսնական զգացումները. երբ գիւղը գաղթեցնելու նպատակով կնոջը ստիպում էր փախչել մօտիկ թուրք գիւղը սարվազների անպիտութիւնից ազատուելու համար, կինը ազատւում, պաղատում է, որ թողնէ իր չար մտադրութիւնը և չգաղթեցնէ խեղճ գիւղացիներին։ Սկզբում Ղևոնդը կնոջ թախանձանքից ամենևին չի ազդւում, բայց յետոյ երբ տեսնում է ճչող նորածին մանկան ընկած անշնչացած կնոջ մարմնի վրայ, արձանանում է և քարացած սիրտը զգում է «որ իր պատիւն օտար պարսիկների առաջին անվայել ընկած է, որ կանացի պատկառանքն ինքը ոտքի տակ է տուել», զղջում է իր արածի վրայ, թողնում է գաղթեցընելու դիտաւորութիւնը և հեկեկանքով սիրտը թեթևացընում, որպէս յանցագործ՝ աղօթքներ մրմնջալուց յետոյ. նոյնպէս, երբ տեսնում է, որ միակ աղջիկը խորշում է իրենից, հայրական գգուանքներին արհամարհանքով է պատասխանում, ցնցւում է նա, և դէմքի վրայ նկատւում է նեղքին կռուի պատկերը՝ փոփոխելով կամաց-կամաց զղջման արտայայտութեան։ Սակայն ցնցումները բոպէական են, որ առաջանում են խղճի խայթից։ Երբ սարդարի քաղցը աչքից ընկնում է և անդթաբար ճիպոտների հարուածներ ստանում, նորից բորբոքւում է նրա մէջ անիրաւութեան զգացումը, երևան է գալիս առ ժամանակ մոռացութեան մատնուած մատնչութեան և քսութեան եռանդը, որից յետոյ խօսք է տալիս աւելի մեծ չափով շարունակելու իր չարագործութիւնները։

Սրանից վատթար է Տէր-Մելիքսէթը, որը «ի բնուստ ճիզուիթ էր ծնուել» անպատկառութեան մէջ մրցում է Ղևոնդի հետ և ոչ մի արատաքին հանգամանք ճնշող տպաւորութիւն չի գործում նրա վրայ։ Նրա ծնկները չեն կորտուում կամ ձեռքերը չեն քարանում եկեղեցում ծնրա-

գրած ու բազկատարած աղօթելիս ի ցոյց ժողովրդեան, կամ ամօթի ու պատկառանքի ճնշում չէ զգում, երբ մեչիդում մոլլաների հետ երեսը դէպի հարաւ շրթունքները շարժում է ի նշան հաւատարմութեան։ Կեղծաւորութեամբ և մատնութեամբ բարոյապէս մեռցրել էր ոչ միայն Աշտարակը, այլ և ամբողջ շրջակայքը և նոյն իսկ Էջմիածնի միաբանութիւնը՝ «մի խօսքով նա ժանդախտ էր աշտարակցիների համար, որից ամենքը խորշում էին, որից զգուելու ամեն մինը իրաւունք ունէր (Կռուածաղիկ 90)։ Սաքօն (Հայցի խնդիր), ցեցապետ Բալասանը, Տէր Գասպարը (Ցեցեր), Տէր Սիւքասը (Սկիզբն երկանց), Ֆարմասոն բէգը (Աքցիզչի) և այլն և այլն, այս տիպի մարդիկ են և տարբերւում են միմեանցից իրենց գործունէութեամբ. մէկը բռնակալ է, միւսը վաշխառու, մէկը աւազակ, միւսը սատանայ, մէկը բարոյապէս է մաշում գիւղացուն, միւսը ֆիզիքապէս ճնշում։

Սրանց հակառակ բարոյական բնաւորութեամբ տիպերը, հազարեա, անգոյն են։ Գէորգ խալֆէն (Կռուածաղիկ) նահատակական մարդ է, խաղաղասէր, բարի և ունևոր է, այս յատկութիւնների շնորհիւ գիւղում առաջին մարդն է դարձել և վայելում է մեծի ու փոքրի համակրանքը։ Գէորգ խալֆէն որդի չունի, բայց բոլոր գիւղացոց հայրութիւն է անում, բոլորի ցաւերին դարման անում և հաւասարապէս պատկառանք է ազդում թէ համագիւղացիների, պարսիկների և թէ պաշտօնեաների, գործակալների, տէրտէրների վրայ։

Այսպէս է և տէր Յարութիւնը, որ քիչ թէ շատ սիրելի է դարձել ժողովրդին իր մաքուր կենցաղով. սա աշակերտներ է հաւաքում և իր գիտցածը սովորեցնում, «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ» սկզբունքով։ Այս կարգի հերոսների մէջ Շահէնը աչքի է ընկնում որպէս հաւատարիմ բժիշկ, աղքատների խնամող, հայրենասէր։ Այսպիսի բնաւորութիւններ են Ասքանազեան, Մելքիսեդեկեան (Սկիզբն երկանց), Սիսակ (Ցեցեր) և այլն։

Այսպիսով Պոշեանի հնչած բնաւորութիւնները տիպեր չեն կարող լինել մեր գրականութեան մէջ. գլխաւորապէս այն պատճառով, որ նրանք միակողմանի են և ա-

ռանց հոգեբանութեան և որ բնաւորութեան գծերի խտացում չկայ։ Հեղինակը չի էլ աշխատել այդպիսի տիպեր արտադրելու, այլ նկարել է, երբեմն անշնորհք կերպով, իր ծանօթին, իր տեսածին։ Բացասական բնաւորութիւնները համեմատաբար աւելի պայծառ են և խոշորացոյցով մեծացրած են երևում մեզ, իսկ հակառակ բնաւորութիւնները կիսատ և անդոյն են։ Բայց թէ այս բնաւորութիւնները և իր երկրորդականները, որ աւելի յաջող են փոփոխութեան չենթարկուելու պատճառով, ժամանակի ընթացքում, այս գաւառի քաղաքակրթական պատմութիւնը գրելիս, անշուշտ, պիտի մեծ նշանակութիւն ունենան որպէս որոշ շրջանի կեանքի կենդանի ներկայացուցիչներ։

Գործող անձանց անկենդանութիւնը ապրել է և վէպերի վրայ, զրկել տալով կենդանութիւնից և հետաքրքրութիւնից։ Պուշանի վէպերում ոչ գործողութիւններն են բնաւորութիւններ յառաջացնում և ոչ էլ բնաւորութիւնները գործողութիւններ. վէպերը մեծ մասամբ պատկերների հաւաքածու են ներկայացնում։ Իւրաքանչիւր ընթերցող կարող է վկայել, որ ընդհանրապէս վէպերի մէջ ամէն մի գլուխ առանձին-առանձին վերցրած, մանաւանդ ժողովրդական բարբառով գրուած, կենդանութիւն ունի, կարծես թէ այդ գլուխները բնութիւնից են պոկուած։ Պուշանն իսկապէս նկարիչ է և լուսանկարչութեամբ հանել է Աշտարակի բնութեան մի որոշ շրջանի տեսարանները։ Բայց այս դեռ բաւական չէ, այս յաջողութիւնը դեռ գրական չէ, որ վէպերը ընդունուեն իբրև գեղարուեստական ստեղծագործութիւններ, որովհետև բաւական չեն հասարակ լուսանկարչութեամբ հանած մասեր, այլ և անհրաժեշտ են մասերի յարաբերութիւն, միութիւն, ամբողջութիւն ներշնչուած ոգևորութեամբ, գրողի ոգին, անհատականութիւն և այլն։ Ըստ Ֆրանսիացի հռչակաւոր քննադատ Տէնի գեղարուեստական երկի նպատակը պիտի լինի «աւելի պարզ և աւելի լրիւ բացայայտել մի որև է էական կամ աչքի ընկնող բնաւորութիւն և հետևաբար մի որև է գաղափար՝ քան այդ անում են իրական առարկաները։ Նա այդ նպատակին հաս-

նում է, գործ դնելով մի որև է ամբողջութիւն կազմակերպուած մասերի, որոնց յարաբերութիւնները սիստեմաբար փոխուում են...» (գեղարուեստի փիլիսոփայութիւն), բայց այս, ի հարկէ, մեր վիպասանի համար չէ ասուած։ Գեղարուեստական երկը մի ամբողջութիւն պիտի ներկայացնէ առանց որև է ենչին աւելորդաբանութեան, նոյն իսկ երկրորդական դէպքերը իրենց որոշ նշանակութիւնը պիտի ունենան և պարզաբանող դեր պիտի կատարեն գլխաւոր խմբասի նկատմամբ, և դրանց բացակայութեան ժամանակ ամբողջութիւնը անպատճառ մի կորուստ պիտի ունենայ։ Եթէ մարդու մարմնի երկրորդական կոչուած մասերը անդամահատենք, նա ոչ միայն կոգեղանայ, այլ նոյն իսկ գոյութիւնը վտանգի կենթարկուի։ Այդպէս էլ գեղարուեստական երկը պիտի լինի, մինչդեռ Պուշկինի վէպերը արժանաւորութիւն կունենան այն ժամանակ, երբ մկրատը վերցնես և անխնայ այստեղից այնտեղից թերթեր խուզես։ Այս բոլոր թերութիւնները նրանից է, որ նախ՝ մեր վիպասանի միջակ տաղանդը չէ զարգացած և երկրորդ՝ ինչպէս երևում է, գեղարուեստի մասին վերին աստիճանի սահմանափակ տեղեկութիւն է ունեցել։

Վէպը շատ տեղ դարձրել է հէքիաթ լիքը ընդմիջումներով և դիմումներով. երբեմն ընթերցողից խնդրում է թողնել պատմութեան թելը և ուշադրութիւն դարձնել այս կամ այն կէտի վրայ, կամ հէքիաթանման ձևով է հերոսին մէջ բերում. «ինչպէս եղաւ, որտեղից եկաւ, աւելորդ է ասել, մի օրից մի օր գտանք Շահէնին...» Որտեղ գործողութիւն է հարկաւոր, պատմում է և ընդհակառակը, փոխանակ մի երկու նախադասութեամբ վերջացնելու, կողմնակի մարդկանց խօսակցութիւնն է մէջ բերում և մեծ ձանձրոյթ առաջացնում. օր. «հարցասիրական է լսել Աշտարակցի երկու պառաւի խօսակցութիւնը,..» (Բդդէ 149) և երկար ու բարակ այդ խեղճ պառաւներին խօսեցնել է տալիս։ Այս պատճառով վէպերի մէջ աւելորդ մասեր և շատախօսութիւններ շատ շատ են, ոչ միայն պարբերութիւններ կամ երեսներ, այլ և գլուխներ կարելի է կրճա-

տել և վէպի ամբողջութիւնը երբէք չի վնասուի։ Կռուածաղիկի մէջ «Ս. կիւրակէ» վերնագրի տակ խօսում է աւերակների, մատուռների, խաչքարների և այլն մասին, բոլորովին անկապ, ի հարկէ, վերջն էլ աւելացնում է «այստեղ ընթերցող, ես երեսս խաչակնքեցի, դու էլ ինձ հետևիր»։ հրաշալի վիպասանութիւն և տիրացու ազգի բոլորովին համապատասխան մի վիպագիր... Սօս և Վարդիթերի մէջ թաղման նկարագրութիւն, ուխտագնացութիւն, թուրքերի գողութիւն, նշանտրէք, հարսանիք և այլն, բոլորն էլ շատ թոյլ կերպով կապուած են, աւելի շուտ, ի զուր տեղը մէջ բերուած։ Սոյնպիսի մի խայտաբղէտ տեսարան է ներկայացնում Շահէնը, մի խառնափնդոր խանութի է նման այս վէպը, որտեղ ամեն ինչ անկարգ կերպով դասաւորուած է. միջադէպեր, որքան ցանկանաք. գաղթականութիւն, Թաղիադեանի մի նամակը,*) Արմաւիրցիների Ներսէս կաթուղիկոսին ուղղած մի խնդրագիր, ուսանողութիւն, խաչագողութիւն, և ընթերցողը ակամայից գալիս է այն եզրակացութեան, որ վիպասանը գլխաւոր ուշադրութիւնը դարձրել է ոչ թէ վէպ գրելու վրայ, այլ ուզեցել է խարջել այն բոլորը, ինչ որ լսել է վերոյիշեալ նիւթերի մասին։

Շատ մասերում էլ վէպի մէջ հրապարակախօսական յօդուածներ է մտցրել և որև է ժամանակակից խնդիր իր հասկացողութեամբ պատճառաբանել, այսպէս օրինակ՝ աշխատել է արդարացնել Ներսիսի աջակցութիւնը գաղթականութեան խնդրում (Շահէն), ուրիշ տեղ Շանշեանի ջատագովութիւնն է անում, պարզում թշնամիների դէպի նրան ունեցած վերաբերմունքը և իր ցաւն արտայայտում, Սահմանադրութիւնն է փառաբանում (Սկիզբն երկանց)։ Նկարագրելով Աշտարակի կամ շրջակայքի ընութիւնը, (Կռուածաղիկ) իր անբաւականութիւնն է յայտնում, որ որև է

*) Դեռ պարծենում էլ է, որ այս նամակը ձեռք է բերել և իբրև՝ ապագայում մատենագրութեան համար նշանակութիւն ունեցող գործ գնահատում է, ուրեմն վէպը ուզեցել է մատենագրական ժողովածու դարձնել։ Բայց հետաքրքիրն այն է, որ այս նամակը ստացել է վէպը գրելուց յետոյ։

նկարիչ չէ անմահացրել այդ հրաշալիքները, մեղադրում է Այվազովսկուն, որ չէ հետաքրքրուել երկրի այս սքանչելի տեսարաններով և այլն։ Իրրև ազգասէր հրապարակախօս զգացում է և չի ուզում երկարացնել սակիքը, վախենալով, որ ընթերցողը կարասուի դառնութիւն լսելիս։ Կուսածաղիկի մէջ (էջ 333) մի տեղ վէպի թելը կտրում է ընթերցողին յայտնելու համար, թէ այս նկարագրած դէպքերը կամ սովորոյթները տասն է պատմել և տխրսում է, որ շատ բան մոռացել է գրի չառնելու պատճառով (Բղդէ 113)՝ և կամ գիւղական սովորութիւնների նկարագրութեան անհրաժեշտութիւնն է ուզում ապացուցանել, մի բան, որ եթէ շատ մեծ անհրաժեշտութիւն է զգացուել, կարելի էր յառաջաբանի կամ ծանօթութեան մէջ դնել։

Ուրեմն այս և սրա նման թերութիւններ առաջացել են գլխաւորապէս վիպասանի ստեղծագործող ոյժ չունենալուց, գեղարուեստի մասին թիւր կարծիք ունենալուց և մասնաւորապէս նրա անհոգութիւնից, որովհետև շատ յաճախ տեսնում ենք մեղանչած պատմութեան եղանակին. հերոսների մէկի բերանով մի բան պատմելու ժամանակ միջամտում է բոլորովին անտեղի կերպով և սկսում է ինքը պատմել, մոռանալով մի բոպէ, որ խօսողը ուրիշ է, միւս կողմից էլ «սիրելի ընթերցող» դիմումներով համեմել է վէպերը։ Վէպերի անյաջողութեան պատճառներից մէկն էլ այն է, որ առհասարակ մեր «մեծ» գեղարուեստագէտ բանաստեղծները չեն բարեհաճում իրենց գրածները մի երկու անգամ փոփոխելուց յետոյ հրատարակել։ Տօլստոյի պէս հանճարեղ գրողը «Война и миръ» անագին դիւցազներգութիւնը եօթն անգամ գրել, փոփոխել և յետոյ միայն ցանկութիւն է յայտնել տպագիլ տալու. այդպէս են արել և անում են միւս նշանաւոր գրողները։ Հաւատացած ենք, որ Պուշկինը, ինչպէս անում էր Բաֆֆին,*) մի անգամից ամեն բան արել վերջացրել է, իսկ յիշատակարաններից տեղեկութիւններ հաւաքել և մի բիչ ոյժ տալով երևակայութեանը,

*) Տես հոբիզոն։

կապկպել այդ դէպքերը և տալ հասարակութեան, ոչ քաջութիւն է և ոչ էլ բարեխղճութիւն վիպասանի կողմից։

Այսպիսով Պոշեանի վէպերը ներքին և արտաքին կողմից շատ թերութիւններ ունենալու և անմշակ լինելու համար, կարող ենք ասել, որ գեղարուեստի և տեխնիկայի տեսակէտից շատ թոյլ են, չնայած այն յաջողութեան, որ վիպասանը ունեցել է բնութիւնը արտանկարելու մէջ։

Գ.

19-րդ դարու երկրորդ կիսում Եւրոպայի ազդեցութեամբ մեր ունեցած կեանքի համառօտ բնութագիրը։—Վիպասանի բռնած դիրքը այդ երևոյթների նկատմամբ.—հայրենասիրութիւն, ինքնապաշտպանութեան և ինքնաճանաչութեան գաղափարներ.—Հոգևորականների ազդեցութիւն.—գիւղական ցեցապատներ.—Հին և նոր սերունդի մաքառումը։—Եզրակացութիւն։

19-րդ դարու երկրորդ կիսից սկսած, ինչպէս տեսանք, մեզ համար մի նոր շրջան է սկսւում։ Յեղաշրջուելով միանգամայն մեր աշխարհայեցողութիւնը, յեղաշրջւում է և մեր լճացած կեանքը։

Նապոլէոն մեծի պատերազմների, Իտալիայում ազատութեան ոգով ներշնչուած Գարիբալդիի արշաւանքները, Բալկանեան թերակղզու վրայ փոքրիկ ազգութիւնների անկախութեան ձգտումները և այլ քաղաքական հանգամանքներ վերածնում են 19-րդ դարու հայրենասիրական գաղափարը իր վեհ բնաւորութեամբ։ Այս բարերար ազդեցութիւնից անմասն չմնաց և հայ ազգը. հայն ևս գլուխ բարձրացրեց, եղած անկարգութիւններին և ճնշումներին վերջ դնելու համար իրաւունքներ պահանջեց և ցանկացաւ ապրել իբրև առանձին մարմին իր առանձին գլխով։ Այս ոգևորութեան հետևանքը լինում է 1860 թ. արևմտեան հայերին շնորհուած Սահմանադրութիւնը։

Միւս կողմից Կիլիկիայի բարձրութիւնների վրայ ապրող մի փոքրիկ, բայց եռանդոտ ու ոգևորող բուռն ժողովուրդ աշխատում էր քաջութեամբ իրեն անկախութիւնը

անխախտ պահել, ուստի և 1862 թ. տեղի է ունենում այն մեծ արիւնհեղութիւնը, որ նոյն իսկ Եւրոպական հեռաւոր երկրներում արձագանք գտաւ։ Այս ապստամբութեամբ մեր մէջ ծագեցաւ հայրենիքի պաշտպանութեան գաղափարը, որ մինչև այդ, կարելի է ասել, չկար այդ բնաւորութեամբ։ Այնուհետև ծանրակշիռ նշանակութիւն ունեցող երևոյթներ տեղի ունեցան իրար յետևից։ Ռուս տաճկական պատերազմը, Սան Ստեֆանոյի դաշնագրութիւնը, որի 16-րդ յօդուածը մեզ էր վերաբերում, ապա Վարժապետեանի ջանքերով Բերլինի վեհաժողովում տաճկահայոց խնդրի խորհրդակցութեան նիւթ դառնալը և 61-րդ յօդուածի խմբագրութիւնը առաջ բերին մեծ ոգևորութիւն և երազանք, որ իրենց ազդեցութիւն են ունենում գրականութեան վրայ։

19-րդ դարը ուրիշ շարժում էլ է առաջ բերում. ընդհանրապէս նալինելով հասարակական կեանքի, մտքի, գիտութեան և կրօնական հասկացողութիւնների մէջ մեծ յեղաշրջում առաջ բերող շրջան, իր փորձնական և պատմական գիտութեան արած հսկայական յառաջադիմութիւններով, մեծ շարժում առաջ բերեց լուսաւոր երկրներում, որտեղից էլ կայծակի արագութեամբ փոստային, հեռագրական յարմարութիւնների և այլ քաղաքական հանգամանքների շնորհիւ տարածուեց հեռաւոր վայրերում, խաւարի մէջ ապրող ֆիզիքապէս ու մտաւորապէս բնութեան տակ հիւծուող ժողովրդների մէջ։ Այդ նոր ճշմարտութիւնները լուսաւորում են և լուսաւորեցին մարդկային գիտակցութիւնը և ազատեցին նրան դարաւոր կաշկանդումից, փշրելով հին նախապաշարմունքների շղթաները։ Այդ մրրկածուփ ժամանակում, մարդկութեան համար սուրբ և սիրելի գաղափարների ալեկոծման ժամանակ, ազատութեան, եղբայրութեան և հաւասարութեան գաղափարների քարոզուող վայրերում մնուած հայազգի պատանիներ վերադառնում էին լաւագոյն տենչերով հայրենիք՝ սթափեցնելու խորը թմրութեան մէջ ընկղմուած հայրենակիցներին, տալով նրանց կեանքի նոր հասկացողութիւններ, նոր ճշմարտութիւններ, քարոզելով սոցիալական նոր պրոբլեմներ։

Եւ իզուր չանցան Փարիզի, Դօրպատի աւազաններում մկրտուածների, հայ իդէօլոգների ջանքերը ու քարոզները. կարճ ժամանակում ուսում ու կրթութիւն տարածելու նպատակով կազմւում են ընկերութիւններ, բացւում են դպրոցներ, հաստատւում լրագիրներ, որով ուզում էին լեզու մշակել, ժողովուրդ կրթել։ Այդպիսի եռանդուն գործունէութիւն բնականաբար առաջ բերեց կուսակցութիւններ, ուրեմն իրերի կամ խնդիրների մասին տարբեր հասկացողութիւն ունեցողներ, տալով ամեն մէկն էլ իր աշխարհայեցողութեան պաշտպան և իր զգացմունքների թարգման տաղանդներ։ Այնուհետև շարժումը քանի գնաց խորացաւ և հետզհետէ դասակարգային շահերի նախաձախնդրութեան վերաճուեցաւ։ Հին սերունդը իր օրհասական ճիգերն էր արձակում նախկին սրբազան աւանդը ամուր պահպանելու համար, կազմալուծւող և հետզհետէ նշանակութիւնը կորցնող հոգևորականութիւնը ջանքեր էր թափում իւր դիրքում ամուր մնալու համար. միւս կողմից էլ տնտեսական կեանքի կապիտալիստական կազմի պատճառով, նորահնար մեքենաների շնորհիւ քայքայման և ոչնչացման վտանգին ենթարկուած տնտեսով գլուխ է բարձրացնում բանւորական դասակարգը և մարդկօրէն ապրելու համար պահանջներ անում... Դժգոհ իր կեցութիւնից գլուխ է բարձրացնում և կինը, պահանջելով տղամարդկանց հաւասար իրաւունքներ... Եւ այս տարբեր ձգտումներով, տարբեր աշխարհայեցողութեան տէր սերունդը կենդանութիւն է մտցնում մեր կեանքի մէջ, քննութեան առնում ազգութիւն, կրօն, եկեղեցի, դպրոց և դրանց վարիչներին. բեմ են դուրս բերում ժողովրդի հարստահարիչներին, վաշխառուներին իրենց այլանդակութեամբ և հասարակական գործիչին, գիւղական անձնուէր վարժապետին իրենց արժանի գործունէութեամբ։

Բայց հայի անդորր կեանքը խանգարւում է, յառաջադիմութեան քարը գլորւում։ Հայաստանի մեծ մասը թուրքերից բնաջինջ է լինում, հազարաւոր տղամարդիկ զոհւում են, մի կողմից այս հարստահարութեան դէմ կոչ է լինում, միւս կողմից էլ կիսակենդան հայերի գաղթն է

սկսում դէպի աշխարհի զանազան կողմեր...

Այս աղէտալի հանգամանքներն են պատճառ, որ դարաւոր ստրկութեան մատնուած հայի մէջ առաջ են գալիս լալկան երգիչներ, որոնք երգում են ազգային թշուառութիւնը, ողբում դրութիւնը և խրախուսում ապագան։ Բաֆֆիի վէպերի կենդրոնական միտքը, ոգևորող գաղափարը հայրենասիրութիւնն էր, նոյն այս գաղափարը յաճախ երգուել է քնարի վրայ (Դամառ Քաթիպա)։

Ահա հարուստ երևակայութեան նիւթեր, որոնցից կարող է ոգևորուել և՛ պատմարանը և՛ հրապարակախօսը և՛ երգիչը և՛ վիպասանը։

Այժմ տեսնենք, Պոշեանն ինչ դիրք է բռնել դէպի ժամանակակից այդ մխիթարական և անմխիթար երևոյթներն ու դէպքերը։

Վիպասանը, որպէս տանջուած և ճնշուած ազգի զաւակ, բաց է անում ընթերցողի առաջ անցեալի տխուր տեսարաններ և ներկայի դրութիւնը սև քօղով ծածկում. «Ո՛ր աշխարհն այնքան խաղալիք է դարձել մրրկածուփ բաղդի ոխերիմ հարուածներին, որքան Հայոց աշխարհը. ո՛ր ազգն այնքան ցաւեր և նեղութիւններ է քաշել, ինչքան էս մեր ջրատար, ամենքի աչքի փուշ հայը...» այսպէս է գանգատւում կոյր բաղդի դէմ մեր վիպասանը։ Հայրենասիրական զգացումը թելադրում է պարծանքով յիշել Արամներին, Տիգրաններին, Տրդատներին, որոնց ժամանակ հայ ազգի բաղդը ժպտում էր, նոյն զգացումը թելադրում է կոտրուած սրտով պատմել աննախանձելի կեանքը բարբարոս օտարների անգթութեան ժամանակ։ Սարսափելի աղէտների յաճախակի կրկնութիւնները պատճառ են եղել, որ մեր երկրի փառքի վայրերը աւերակ են դարձել, փլուել են արձաններ և խանգարուել մատուռներ։ Վիպասանը հիացած է Հայաստանի համար փառք ու պարծանք կազմող այս աւերակներով, էջմիածնով և բազմաթիւ սրբատեղիներով, նոյն իսկ ընութիւնը հրաշալի է այնչափ, որ վիպասանը հայ հովուի սրինգը չի փոխում Եւրոպական երաժշտութեան հետ, բայց ցաւում է «երբ դառն քրտինքով շինած յիշատակա-

բաններեր» անասունների բնակավայր են դարձել, գաղթականութեան պատճառով ամայի են եղել շէն քաղաքներն ու գիւղերը. «սրանք կորած ցրուածներն են, որ մեր սիրտը ծակեցին, յետ դառնանք տեսնենք, թէ հայրենիքի փուշն ուրիշ տեղերի վարդից գերազանց համարող չարքաշների դրութիւնն ինչպէս եղաւ (Կռուածաղիկ 312)։ Այստեղ էլ տեսնում է նոյն վրդովմունքը, նոյն սրտութիւնը և արիւնհեղութիւնն է պատկերանում վիպասանի առաջ, և այդ բոլորը նրա համար, որովհետև հայի մէջ մեռած է ինքնաճանաչութեան և ինքնապաշտպանութեան ոգին։ Հայը մեղաւոր է, որովհետև չի վստահանում քրդին կամ խածնողին ոյժով դիմադրել, որովհետև անօրէն ցեղի հարուածներին սրով չէ պատասխանում։

Պոշեանը այս հարցը քննում և լուծումն է տալիս «Սկիզբն երկանց» վէպի մէջ։ Վարագայ Վանքը և Ներսիսեան դպրոցը իրենց սանիկներով և առաջնորդներով սկիզբ դրին այն երկունքին, որով հայ ազգը կէս դար առաջ բընունած էր։ Երկու դպրոցի ներկայացուցիչները՝ Ասքանազեան և Մելիքսեդեկեան Վանում իրար պատահելով, համաձայնութիւն են կայացնում ապագայ գործունէութեան համար՝ մտնել ժողովրդի մէջ, տեղակայութիւն կազմել, ուսումնասիրել և ինքնաճանաչութիւն առաջ բերել։ Ասքանազեանը Վարագում ստացել էր հայ ժողովրդին սիրելու տրամադրութիւն, ինքնաճանաչութիւն սերմանելու եռանդ և ժողովրդի ցաւերն ու վշտերն արձանագրելու համբերութիւն, իսկ Ղարաբաղի սարերում մեծացած և Թիֆլիսում սնուած Մելիքսեդեկեանը ձեռք էր բերել անվեհերութիւն և ինքնապաշտպանութեան ոգի՝ «հայն եթէ զիր գիտենայ, նա կատարելապէս կըմբռնի իր նշանակութիւնը, հայն եթէ զէնք ունենայ և գործ ածելն իմանայ, քուրդը նրան հաւատարիմ շունը կդառնայ»։ Այս գաղափարով ոգևորուած երկու երիտասարդները նեաւում են գործունէութեան ասպարէզ. սրանց հնարած միջոցները, անշուշտ, վիպասանին իրենն են, այնպէս որ այս երկուսի բերանով խօսում է ինքը հեղինակը, սակայն այս մի նոր յայտնութիւն չէ, որովհետև

Պռոշեանից առաջ աւելի գեղեցիկ ձևով քարոզել են այդ գաղափարները Բաֆֆին (Խենթ) և Գամառ Բաթիպան, որ հային ինքնաճանաչութիւն բերելու համար հարկաւոր է այբուբենը, իսկ ինքնապաշտպանութեան համար՝ զինավարժութիւնը։

Պռոշեանն անպայման անհրաժեշտութիւն ընդունելով ինքնապաշտպանութիւնն ու ինքնաճանաչութիւնը, պարզ է՝ որ պիտի հարուածէր ազգի այն առաջաւոր մարդկանց, որոնց ձեռքումն է գիտութեան բանալին և որոնց վրայ է ընկած ազգային ոգին կենդանի պահելու պարտականութիւնը, բայց զլանում են կատարելուց։ Այդպիսի մարմին է օրինակ՝ հոգևորականութիւնը. ուստի ոչ միայն վարդապետների, քահանաների անգործունէութիւնը և կաշառակերութիւնն է մտրակում, այլ նաև վերին աստիճանի տգիտութիւնը։ Տգիտութիւնը մերկացնելիս, վիպասանը գործ է դնում իր յատուկ իմաստը, որը որքան քնքուշութիւն, այնքան աւելի դառնութիւն և վիշտ է պարունակում։ Օրինակ՝ քահանան իր բերանով խոստովանում է, որ երբեմն կարգակատարութեան ժամանակ, երբ նեղ տեղն է ընկնում, անգիր արած աւետարանը կամ սաղմոսն է ասում։ Մուրհակ կարդալու ժամանակ առաջուց անունները իմանալով, սովորական դարձուածները արագ-արագ կարդում է, բայց միւս մասը թողնում է պարտապանին և պարտատիրոջ ասելով, որ երկուսն էլ «առնելացուկի և տալացուկի» հաշիւը գիտեն (Բդդէ)։ Շատ քահանաներ կարդալ-գրել չգիտեն։ Վարդապետ գործակալի այլանդակ լեզուով գրած հրամանից ինչ ասես, որ մեր ազգտ տէրտէրը չի եղրակացնում. «պսակալոյծ առնել», տէրտէրը բացատրում է պսակը ուշացնել մինչև լոյս բացուելը (Հացի խնդիր), և երբ ազիտութիւնը պիտի պարզուէր օտարի ներկայութեամբ, ամօթն ու պատկառանքը չքանում են տէրտէրի դէմքից՝ տեղի տալով խորամանկութեան. «հասկացայ որդի... համա դու էլ, որ մի անգամ կարդաս, աւելի լաւ կլինի». այսպէս է ազիտութիւնը ծածկում խեղճ գիւղացու շլինքին ծանրացած երկարազգեստ արտօնեալը։

Պռոշեանը ծաղրելով ձեռնհաս մարդկանց անտարբե-

րութիւնը, հոգևորականների տգիտութիւնը, չի մոռանում ապտակել նաև երկրագործ հայ գիւղացու խաղաղութիւնը խանգարող ցեցերին, ժողովրդի արիւնը ծծող տղրուկներին։ Մանրավաճառ Բղդէն այսպիսի վաշխառուներից է, որն իր վարպետութեամբ կարողացել է գիւղացիների համակրանքը վայելել, երբեմն էլ փոքրիկ նուէրներով շատերի սիրտը գրաւել, դրա փոխարէն կրկնապատկում, եռապատկում էր խեղճ անդրադէտ Մաղաքի ոչխ գիւղացու ապառիկների հաշիւը։

Այս գաղափարը զօրեղ արտայայտութիւն է գտել ցեցերի մէջ, որտեղ գիւղական ցաւերով վշտացող վիպասանը ի ցոյց է բերում հասարակութեան միջի այն ցեցերին, որոնք, կարծես, ժառանգաբար յաջորդելով իրար, ստեղծուած են խաղաղ համայնքի կեանքը վրդովելու և մարդկանց տանջելու համար։ Գիւղական ցեցերը սովորական մարդկանցից տարբերւում են իրենց ընտաւոր խելքով, ճարպիկութեամբ և ստոր հակումներով։ Բալասան աղան այդպիսի մի տիպ է, թէև ընտանութիւնը այնքան էլ բաղմակողմանի չէ նկարագրուած, և կարծես աչքաթող արած լինի գաւառական թղթակիցների վաշխառուների մասին գրած «Հին թղթակցութիւնները։ Բալասան աղան մեծ ուրախութեամբ մուրհակներով փող է բաժանում կարիք ունեցողներին և դրա հետ էլ հեռահար բարձրացնում իր հեղինակութիւնը գիւղացոց աչքում։ Փողի ոյժով ընկճել է նա Օ. գիւղի հասարակութեանը իր քմահաճոյքը ուրախութեամբ կատարելու չափ։ Վաշխառուների թագաւորը նոյն իսկ խառնւում էր գիւղացոց ներքին գործերի մէջ և ստիպում էր դատաւոր ընտրել տալ նրանց, որոնք առաջուց պատրաստակամութիւն էին յայտնում իրեն գործիք դառնալու, հակառակ դէպքում մուրհակը իր կործանիչ ոյժը կգործադրէր այս կամ այն ընտանիքի վրայ, որովհետև մի չնչին գումար էր հարկաւոր, որ խեղճ գիւղացին ամբողջ ներունդով ցեցապետին գերի մնար. «150 մանէթ վէր կալայ, էսա հինգ տարիա, հինգ էնքան տուել եմ, դեռ 500 մանէթ էլ կայ», կամ մի ուրիշ տեղ՝ 30 մանէթը 500-ի հասել, գանգատւում է դառնութեամբ գիւղացին։

Բալասան ապան յաճախ նորոգում էր մուրհակները և ամեն անգամ էլ «ըստ առաջին պահանջման»-ը ապի մբաքից չէր մոռացուում։ Մուրհակները կեղծելուն օգնում էր խաչագող Վանեցի գրագիրը (ի միջի այլոց ասենք, որ այս խաչագողի բնաւորութիւնը յաջող է հանած), որը հմտութիւն ունէր 30-ի չափ սառրագրութիւն կեղծելու։

Կոչեանը Ցեցերի մէջ բայի վաշխառութեան այլանդակութիւնը ցոյց տալուց, մանաւոր կերպով հանդէս է բերում հին և նոր սերնդի մաքառումը։

Հնի և նորի կռիւը, որ վերածնութեան արդիւնք է, արտայայտութիւն են գտել և ուրիշ ազգերի գրականութեան մէջ։ Ռուսաց մէջ ամենամեծ թափով արտայայտել են Տուրգենև, Գրիբաեդով, Օստրովսկին և այլն. այս մեծ տաղանդները ստեղծել են Զացկու, Ժադովի և Բազարովի նման տիպեր, իսկ մեր համեստ տաղանդի տէր վիպասանը բաւականացել է Սիսակի պէս տիպով։ Սիսակը պատահմամբ է ասպարէզ գալիս, այսինքն աչքերի հիւանդութեան պատճառով թողնում է Ճեմարանի դասընթացքը և ապրում գիւղում, ուրեմն կռիւն այստեղ մեծ շրջանի մէջ չէ դնում և նորի յաղթանակը չէ շնորհաւորում։ Թէպէտ Սիսակը նշանաւոր գործեր չի կատարում, յամենայն դէպս նրա բռնած ընթացքից և մանաւոր դէպքերից երևում է, թէ որքան բարոյական ազդեցութիւն է ունեցել հասարակութեան վրայ և թէ ինչ չափով յաջողութիւն են գտել նրա տուած շահաւէտ խորհուրդները։ Սիսակը անզօր զբաղուելով հին սերնդի հետ դէմ առ դէմ կռուելու, ուշադրութիւն է դարձնում մատաղ սերնդի կրթութեան վրայ. երիտասարդներ է հաւաքում իր շուրջ, գրել կարդալ սովորեցնում, լրագիրներ է բերել տալիս, գրքեր կարդում նրանց հետ, ոգևորութիւն առաջ բերում։

Վիպասանի այսպիսի անյաջողութիւնը գուցէ կարելի լինի բացատրել նրանով, որ դէպքը շատ մանաւորած է Նրա համար, կարծէք, չկային ազգային գործիչներ, չկային անհատներ, որոնք տոգորուած գիւղական կեանքի բարեփոխութեան գաղափարով, ոչինչ չէին խնայում զոհելու և

կարծէք, գոյութիւն չունէին հնի դէմ մաքառող անհատներ։ Այսպիսի դէմքեր չեն ոգևորել մեր վիպասանին, գուցէ և նրա համար, որ Աշտարակի պանեգերիստը իր շրջանից դուրս ոչինչ չէ ուզեցել ճանաչել և կամ միջոց չի ունեցել դուրս գալու ճանաչելու։

Բացի վերոյիշեալ դաղափարներից մեր վիպասանին զբաղեցրել են նաև մի երկու կենսական խնդիրներ։ «Հայի խնդիր»-ի մէջ ցոյց է տուած մասամբ այն վատ սովորութիւնը, որ մեր մէջ մինչև այժմ էլ գոյութիւն ունի՝ աղայ կամ աղջիկ նշանելու ժամանակ. թէ աղջիկը և թէ տղան ազատ չեն ընտրութիւն անելիս, այլ ենթարկուած են ծնողների քմահաճոյքին։ Այսպիսի ամուսնութիւնը վատ հետևանքներ է ունենում և վերջանում է կամ սպանմամբ և կամ ընտանիքի քայքայմամբ։ Նշանախօսութիւնը լինում է նոյն իսկ շատ վաղ. երբեմն էլ յայտնի չի լինում, թէ կինը տղայ թէ աղջիկ պիտի ունենայ, այնուամենայնիւ խոստանում են երևակայած աղջիկը տալ «աչքադրած» տղային։ (տես նաև Կռուածազիկ 18, 19)։

Պռոշեանը հոգով և մարմնով հակառակ է այս տգեղ սովորութեան և աշխատել է ցոյց տալ դրանից առաջ եկած վատ հետևանքները. մի իրաւացի բողոք դնում է Հեղնարի բերանը, որ գանգատ էր հօր սուսերի դէմ... «ես ինչ քար քցեմ՝ գլխիս, երեք տարեկան անլեզու երեխայ եմ՝ էլել որ իմ՝ հէրս գլուխս կապելա, սեւ քարեկենդան լինէր էն օրն իրենց գլխին, ինձ էլ իմ՝ ախպօրտանց ծոցը դրած պրծած ըլնէր, որ իր քէֆի համար մի մատը երեխէքանց գլուխը կապէր ոչ. եարաբ էս ինչ անօրէն սովորոյթ ա. ծծի երեխին էլ բաշիբեարթամայ կանեն.» (էջ 86)։ Ահա անխօս, անլեզու հայ գիւղացի աղջկայ դրութիւնը այսպէս կենդանի պատկերացրուած է այս մի քանի տողերի մէջ։

Այսպէս ուրեմն, եթէ Պռոշեանին ոգևորող, նրան զբաղեցնող (?) դաղափարների ցուցակը կազմելու լինենք, կըտեսնենք, որ այդ ամիսակը աղքատ է համեմատած նրա յօբելյանական գործունէութեան հետ։ Շատ քիչ անցքեր, երևոյթներ, մարդկութեան զբաղեցնող խնդիրներ են ար-

ձագանք գտել կամ չեն գտել բոլորովին նրա վէպերում։ Զարմանալի է միանգամայն, վերջին տարիները մանաւանդ, հայը անդորը վիճակ չունի, մէկ տեղ նա ընկճւում է, միւս տեղից արցունք թափելով գաղթում են օտար երկիրներ, մի ուրիշ տեղ կամաւոր գնդեր են կազմւում արիւնով ներկուած երկիրը ազատելու համար, ուրեմն անապահովութիւն, վիշտ, տառապանք է պատկերանում ակնատեսի առաջ, և այդպիսի արիւնալից մթնոլորտը միայն ցաւ են պատճառել վիպասանին և ուրիշ ոչինչ... Մի խօսքով ոչ մոլեռանդ քարոզիչ է մի որև է դաղափարի և ոչ էլ մեծ բանաստեղծների նման կարող է ասել։

«Ich singe, wie der Vogel singt
Der in den zweigen wohnet» (Գէօթէ)
(Ես երգում եմ, ինչպէս թռչունն է երգում,
որ բնակւում է ծառերի սաղարթներում),

Դ.

Պոշեանի արժանաւորութիւնը։—Իբրև Աշտարակի կեանքի լուսանկարիչ։ Վիպասանի սուր դիտողութիւնը և կեանքի երևոյթների մանրամասն նկարագրութիւնը։ Հարսանիքի հանդէսի նկարագրութիւնը՝ բանաւոր գրականութիւնը Պոշեանի վէպերում։

Մինչև այժմ տեսանք, որ Պոշեանի վէպերը թէ հոգեբանական, թէ գեղարուեստական և թէ տեխնիկայի տեսակէտից թոյլ են։

Ապա, ուրեմն, ինչով է նա այնքան մեծ համակրանք վաստակել, որ մեր ինտելիգենտ հասարակութիւնը, ինչպէս չմոռացաւ նրա յօբելեանը կատարել, չմոռացաւ և նրա թաղմանը փառաւոր հանդէսներ սարքել և լրագրների էջերը զարդարել երկտող հեռագիրներով ու անհամեստ ձևով գրուած յօդուածներով... Անշուշտ, այդ մեր խղճուկ կեանքն է մեղաւոր, մեր չարաճճի փոքրիկ գրականութիւնն է պատճառ, որ դեռ իր համար կանոնաւոր զարգացման ընթացք է բռնած, այլ պատահականութիւնների շնորհիւ արտայայ-

տուել է, համարեա, ամեն ճիւղերի մէջ, տալով ցնցոտի սոցիոլոգ-փիլիսոփայ կոչուածներ, հէքիաթաբան վիպասաններ, աշուղ բանաստեղծներ, լարախաղաց դրամատուրգներ և այլն, որոնք ամենքն էլ կերակրւում են ուրիշի սեղանի փշրանքներով, բայց շնորհիւ մեր չափ ու սահման չճանաչածներուս, այդպիսիները յորջորջւում են ազգային գործիչներ, գրողներ, ազգային նահատակներ և այլն, և մեր դէպի դրանց ունեցած անտեղի զգացմունքի խորութիւնից փոխուելով գնահատութեան մաշտաբը, արժանիքը հասպատկուել է, պակասութիւնները մէկ կողմ դրուել։

Շնորհիւ այս հանգամանքի, մեր նոր կեանքի և գրականութեան իդէօլոգները քիչ է մնում, որ սրբանան.... Դուրեանը հռչակաւոր բանաստեղծ Շելլիի հետ է համեմատւում, Յովհաննէս Թումանեանի «Սասունցի Դաւիթը» քիչ է մնում Շահնամէից բարձր դասուի, չնայած որ նիւթն է միայն դիւցազներգական, Խրիմեան կաթուղիկոսը՝ Տօլստոյի և Շոպէնհաուէրի նման մտածող, և միևնոյն ժամանակ յեղափոխութեան ռահվիրայ, չնայած որ յեղափոխութիւն բառն անգամ չէ սիրել և լսել անգամ չէ ուզեցել... և այլն և այլն։

Զարմանալին այն է, որ մեր գրողներն ու գործիչները փառաբանւում, աստուածանում են մեռնելուց յետոյ միայն։ Պուշկինի վէպերը անմահ ճանաչուեցան, հեղինակը նոր գրականութեան ռահվիրայ, չնայելով, որ նա եղել է միջին, բայց անզարգացած տաղանդի տէր մի գրող և որ գրուածներն էլ կրել են այդ դրոշմը։ Միջակութեան պատճառով է, որ նա չի կարողացել մի շկոլա ստեղծել, հետևողների մի խմբակ ունենալ։

Առհասարակ ժողովրդագրութիւնը մեր մէջ տաղանդաւոր ներկայացուցիչներ չտուեց. եղան ոմանք՝ Արարատեան, Գ. Բարխուդարեան, որոնք իբրև վիպագիրներ՝ Պուշկինի նման պառաւախօս հէքիաթաբաններ դուրս եկան, իսկ սրանցից յետոյ եկողները, մատաղ սերունդը, գուցէ Ռուսաց ժողովրդագրողների ազդեցութեամբ, մի փոքր հմտութիւն ցոյց տուին՝ կենդանութիւն և հետաքրքրութիւն մըտցնելով վէպիկների մէջ, թէև դերծ չմնացին առաջիններին

յատուկ շատախօսութիւնից և հեռու չգնացին վիպագրութեան մասին նրանց ունեցած հասկացողութիւնից։ Ագապեան, Ճուղուրեան, Տ. Աւետիքեան, Նամալեան, Յ. Մալխասեան և մի կամ երկու վիպակի հեղինակները նոյն աւելի կամ պակաս փոքրիկ գրողներն են, նոյն միևնոյն անշուք թվի շուրջ պտոյտ եկողները։

Սրանց, իհարկէ, Պռոշեանի աշակերտներ չի կարելի անուանել, աւելի շուտ ժամանակի ծնունդ, օտար գրողների հետևողներ, թէև չենք կարող ուրանալ Պռոշեանի ունեցած փոքրիկ ազդեցութիւնը, որովհետև Պռոշեանի տհաս, անզարգացած ընտրութիւնները սրանց նիւթ են ծառայել, գլխաւորապէս վաշխառուները, որից տեսնում ենք օգտուած նաև մեր միւս գեղարուեստագէտ բանաստեղծները։ Օր. հէնց վերջերս Վ. Փափազեանի «Ժայռ»ի վաշխառուն և նրա գրագիրը Պռոշեանի Բալասան աղայի և նրա Վանեցի գրագրի (Ցեցեր) պատճէնն են։ Բայց ընդհանրապէս Պռոշեանի ազդեցութիւնը այնքան քիչ է եղել, որ չարժէ առանձնապէս դրանով զբաղուել։

Սակայն Պռոշեանի արժէքը մենք ուրիշ բանի մէջ ենք փնտրում, մի կողմ թողնելով նրա կատարած հասարակական դերը՝ նուիրելով իրեն կրթական գործին, նպաստելով նրա յաջողութեանը, պէտք է խոստովանել, որ նրա վէպերը ժամանակին մեծ ծառայութիւն են մատուցել մեր նորաբողջ գրականութեանը։ Նախ՝ նրանք աշխարհաբարի նկատմամբ իրենց որոշ դերն են կատարել, նպաստելով նրանց տարած յաղթութեանը, երկրորդ՝ ընթերցանութեան նիւթ են մատակարարել գրագէտ հասարակութեան, մի կողմ թողնել տալով կրօնական միտք բթացնող գրքերը, և ընթերցանութեան նիւթ տուել դպրոցական սերնդին դասագրքերում զետեղուած՝ հայ հոգով, պարզ լեզուով գրուած հատուածների շնորհիւ։ Եւ երրորդ՝ որ գլխաւորն է, Պռոշեանը վէպերի մէջ տուել է մեծ չափով այն, ինչի համար բանաստէղծները գանգատուում են մեր մատենագիրներից, որ վերջիններս հայկական ներքին կեանքի մասին հարևանցի կերպով են անցել, կամ բոլորովին զանց

են առել։ Այս տեսակէտից Պոշեանը բարձր է կանգնած ոչ միայն իր ուսուցչից, այլ և շատ բանահաւաքներից, տալով Արարատեան նահանգի բարբառը, գիւղական կեանքը և գլխաւորապէս Աշտարակ գիւղի ներքին կեանքի մանրամասնութիւնները, սովորութիւնները և աւանդութիւնների մի կոյտ։ Վիպասանի սուր դիտողութիւնից չէ խուսափել նոյն իսկ ընտանեկան կեանքի ամենափոքր երևոյթը և այդ բոլոր մանրամասնութիւնները նկարագրուած են շատ հաւատարմութեամբ, առանց որև է իդէալացման, առանց մի բան թողնելու և աւելացնելու պատկերացրուած է իրականութիւնը, և այդ բոլորը «անկեղծ, կենդանի, գեղին հոտը կառնիս հոն, քակորի վարդի խառնուրդ»։

Վիպասանը մի փոքրիկ fabula պատմառ է բռնում և նկարագրում գիւղի բոլոր տօները, հանդէսները, սովորութիւնները. բացի դրանից հանդէսների, հարսանիքի, յուղարկաւորութեան, ուխտագնացութեան մէջ երևան են գալիս գիւղական բոլոր տիպարները. այստեղ ընթերցողը հանդիպում է երիտասարդ սիրահարների, շահամոլ, կրքոտ, գիւղական վարիչների, ագէտ քահանաների, պարզամիտ ռամիկ դասակարգի և նահապետական խելքով ու կենցաղով ապրող ընտանիքների։

Որպէսզի դաղափար կազմենք Պոշեանի յաջողութեամբ նկարագրած գիւղական կեանքի որև է երևոյթի մասին, աւելորդ չի լինի մի նկարագիր առաջ բերել, թէկուզ Աշտարակի հարսանիքի նկարագրութիւնը, որը վէպի հետ ոչ մի կապ չունի և կարելի է առանձին գրքոյկով հրատարակել։ (Սօս և Վարդիթեր էջ 252—300։)

Մինչև բուն հարսանիքի հանդիսի սկսելը տեղի են ունենում չնչին արարողութիւններ, որոնց նկարագրութիւնը տալիս է հեղինակը. օր. քաւոր համաձանութեամբ նշան ուղարկելիս հրաւէրք սարքել, խնամիներին համաձայնութեան բերել պարտաւոր որոշ գումարի և խալաթների խնդրի նկատմամբ և այլն։

Փեսայի տան «տաշտադրէք»-ը, որին մասնակցում են ալիւրը մաղելու համար հօթը աղջիկ առանձին տներից։

Այդ երեկոյին նշանակւում է նաև բարեկամների և տէրտէրի հաւանութեամբ հարսանիքը կառավարողներ։

Դրացիների օգնութիւնը հարսանիքի սիրոջ, ճոթ-կտրէքը, երբ տունը լցւած կանայք սպասում են քաւորի մօրը, որի ներկայութեամբ դերձակը պիտի հարսնացուի հագուստները ձևի, իսկ դերձակն էլ սրախօսութիւններով և կատակներով մկրատը շարժում է այն ժամանակ, երբ դրամական նուէրներ է ստանում։

Հետևեալ օրը հարսանիքի համար պարարտ եզն է մորթւում, որի արեան մէջ մի կողպէք է թաթախ անւում և կողպուած պահւում մինչև որոշեալ ժամանակ։

Նկարագրած է նաև փեսայի ուխտ գնալը, ընկերների կազմած խնջոյքը, սափրիչի կատարած ծիսակատարութիւնը։ Երեկոյեան հացկերոյթին փեսան իր երկու ընկերների հետ բարձի վրայ կանգնած սպասում է «խօնչէ» բերելուն։ Նորապսակների «հինայ» ստանալը, որ մեծ հանդէսով է կատարւում։

Նորահարսի շորեր հագցնելը, «կիրաքաշի» (երեսբրիչ, որի ծայրերից բռնում են նորապսակները) տալը, պսակ տանելու ժամանակ նուագած տխուր եղանակի դադարեցնելը, ժամհարի հետ սակարկելը, որը եկեղեցու դուռը բաց անելու մենաշնորհն ունի, եկեղեցում թուր բռնելը և այլն, նկարագրած են ամենայն հաւատարմութեամբ։ Իսկ ծէսերը, սովորութիւնները ամեն մի արարողութեան ժամանակ՝ ամենայն ճշտութեամբ։

Պսակից յետոյ պարեր և խաղեր են սարքւում փոքրիկ ներկայացման հետ միասին. օր. շահն է գալիս իր զինուորներով և յանկարծ կեղծ միրուքը այլուում է, կամ գլխին ջուր են թափում, մեծ զուարճութիւն պատճառելով հանդիսականներին։

Հետևեալ օրը թագաւորը թախտի է նստում, դատավարութիւն անում իր ծառաներով և սրան նրան մեղադրելով, մեծ տուգանքներ բարդում և արձակում կամ ազատում փրկանք ստանալուց յետոյ։

Ահա Աշտարակի հարսանիքի նկարագրութիւնը, որից

միայն աչքի ընկնող կէտեր են բերուած։

Այսպիսի մանրամասնութեամբ նկարագրուած են և միւս հանդէսները։ Սօս և Վարդիթերի մէջ մարտի 15-ից սկսում է մինչև բարեկենդանի օրերը եղած բոլոր տօների հանդէսները, ուխտագնացութիւնները և սովորութիւնները նկարագրել և բոլոր տօներն էլ իրար յետևից՝ օրացոյցի մէջ յիշուած տօների կարգաւորութեամբ։ Պակաս մնացած տօները նկարագրում է «Հայի խնդրի» մէջ, որի յառաջաբանում գրում է. «Սօս և Վարդիթեր» վիպասանութեան մէջ Արարատեան նահանգի սովորութիւնները նկարագրելու վիպասանութեան պահանջմանց (?) համեմատ պակաս էր մնացել բուն բարեկենդանից մինչև ծաղկազարդ», և այս վիպասանութիւնով տալիս է պակաս մնացած նկարագրութիւնը։ Դիտմամբ «Հայի խնդրի» նիւթը վերցնում է 40-ական թուականներից, որպէսզի մի որոշեալ ժամանակի կեանքը ամբողջապէս նկարագրած լինի։

Պոշեանը այս սովորութիւնների նկարագրութիւնների հետ տալիս է նաև շատ աւանդութիւններ, ոչ միայն մօտիկ ժամանակից, այլ և շատ խորն անցեալից, այսպէս օրինակ՝ յարդագողի ճանապարհի բացատրութիւն, քառասունքի նշանակութիւն, Մարգագողի մասին աւանդութիւն (Կոուածաղիկ), թեղի ծառի՝ որպէս թուխ մանուկի պաշտամունք, օձերի մասին աւանդութիւն, Արագածի և Մասիսի օձերի կռիւը (Ցեցեր), չար աչքի աղօթք (Բղդէ 46) ողբեր (Կոուածաղիկ 125), Օրորոցի երգ, Վարդավառի երգ (Սօս և Վարդիթեր) որ, արժէր նրա բոլոր վէպերից հաւաքել մի գրքի մէջ։

Մի խօսքով տեղական կեանքի որև է կողմ կարելի է գտնել Պոշեանի վէպերի մէջ, և եթէ մէկը ցանկանայ ուսումնասիրել Արագածոտն գաւառի հայկական կեանքը, անպատճառ ձեռքի տակ պիտի ունենայ Պոշեանի վէպերը, որպէս մի որոշ շրջանի վաւերաթղթեր, թէև անշնորհք կերպով ժողոված, առանց որև է կարգաւորութեան։

Ահա ինչու համար Պոշեանի վէպերը անմեռ կմնան, հէնց միայն այդ կենդանի երակի շնորհիւ։

Ե.

Հայի խնդրի վերլուծութիւնը. բովանդակութիւն, բնաւորութիւններ. Սաքոն և նրա գործած այլանդակութիւնները։ Մովրովի բնաւորութիւնը—կամքի թուլութիւն, կաշառակերութիւն։ Խէչանի բնաւորութիւնը.—հիւրասիրութիւն և պարզասրտութեան գծեր։ Երկրորդական բնաւորութիւններ. գաղափարները. վէպի թերութիւնը։

Պռոշեանի լեզուն. ոճի բնաւորութիւնը. բառարանի հարստութիւնը. քերականական անկանոնութիւններ. տձև դարձուածներ։

Պռոշեանի վէպերից ամենից շատ յաջողուել է Ցեցերը*), որի մէջ տիպերը բնական և նոր էին մեր գեղարուեստական գրականութեան մէջ (Բալասան աղէն), գործողութիւնները կենդանի, նկարագրութիւնը յաջող, մի ամբողջութիւն է ներկայացնում այս վէպը, թէպէտ տենդենցիոզ, թէպէտ հեղինակին յատուկ աւելորդաբանութիւններով՝ մի կոյտ հայհոյանքներով։ Այս յաջողութիւնը պէտք է բացատրել նրանով, որ Ցեցերը բացասական կեանքի նկարագրութիւնն է, իսկ գիտենք, որ հիւանդոտ մթնոլորդի պատկեր տալը Պռոշեանին շատ է յաջողւում։ Որովհետև Ցեցերի մասին համեմատաբար երկար խօսուեցաւ, ուստի առանձին վերլուծութեան համար կարելի է վերցնել Հայի խնդիրը, որը Ցեցերից յատոյ արժանաւորութեան տեսակէտից երկրորդ տեղը կարելի է դասել։ Այս վէպը ոչ միայն Սօս եւ Վարդիթերի շարունակութիւնն է կազմում, այսինքն ժողովրդական կեանքի նկարագրութեան լրացումը, ինչպէս հեղինակն է ասում, այլ և ինքն ըստ ինքեան մի գեղարուեստական արտադրութիւն է ներկայացնում։

Fabula-ն հարուստ և հետաքրքրական է։

Աշտարակում յայտնի գերդաստանի նահապետ Խէչանը եղբօր հետ արդար վաստակով մեծ հարստութիւն էր ձեռք բերել։ Եղբօր մահուանից յետոյ հարստութեան միակ ժառանգ մնում է Խէչանի Հեղնար աղջիկը, որն ոչ այնքան

---

*) Թէև ոմանք համարում են Սօս և Վարդիթերը, իբր թէ նրանով է յայտնի դարձած։

գեղեցկութեամբ, որքան հարուստ ժառանգութեամբ շատ երիտասարդների իդեալն էր դարձել։

Մի բարեկենդան օր Խէչանը գիւղի տէրտէրի և ծերունիների հետ խնջոյքի նստած ուրախանում էր։ Ներկայ էր գիւղի պատուելին իր աշակերտներով, որոնցից մէկը Սմբատ անունով իր եռանդուն խաղերով և երգերով այնքան է ոգևորում Խէչանին, որ վերջինս, ամենքի ներկայութեամբ իր աղջկանը, գիւղական սովորութեան համաձայն, Սմբատի հետ «բաշիքարթամայ» է անում։ Փոքրիկ Սմբատը այնուհետև Խէչանի ընտանիքի անդամ համարուելով, շարունակ նրանց մօտ էր լինում, որ առիթ եղաւ կամաց-կամաց մտերմանալու Խէչանի քրոջ աղջկայ Հերիքնազի հետ (սա իր այրիացած մօր հետ Խէչանի տանն էր ապրում), և վերջն էլ այդ մտերմութիւնը սիրոյ փոխուեց։

Երբ Սմբատը երկար ժամանակ անցնելուց յետոյ խմանում է Հեղնարի հետ նշանուելը, որոշում է խուսափել նրանից։ Իսկ Հերիքնազը սրբապղծութիւն էր համարում ճագատագրին հակառակելը, ուստի աշխատում էր մի կողմից իր մէջ վառուած զգացմունքը խեղդել, միւս կողմից՝ Սմբատի և Հեղնարի մէջ մարած սէրը զարթեցնել։ Գիւղի երիտասարդների մէջ միայն հարուստ և պարծենկոտ Արշակին էր յաջողուել Հեղնարի սիրտը գրաւել շնորհիւ այն տեսակցութիւնների, որ տեղի էին ունենում գիշերները «դրիջակի» միջոցով, թէև անհետևանք էին մնում շնորհիւ մի քանի խոչընդոտների։ Վերջապէս իրար ատող սրտեր՝ Հեղնար և Սմբատը մի փառաւոր օր եկեղեցի են գնում ձեռք ձեռքի բռնած, բայց յանկարծ գործակալի և մովրովի հրամանների համաձայն պսակը խափանուում է։

Այստեղից արդէն սկսւում է դրամն։ Պսակի խանգարողը միկիտան Սաքօն էր, մովրովի հաւատարիմ օգնականը, որը Խէչանի հարստութեանը տիրանալու համար դիմել էր այդ միջոցին։ Ահա այդ պատճառով է, որ պսակն արգելելուց յետոյ, Խէչանի աղջկանը առաջարկութիւն է անում։ Եւ երբ անձնական միջամտութիւնը, պարգևները ոչինչ չեն օգնում, վճռում է աւազակների միջոցով փախցնել, չնայած

որ այդ ևս անյաջող է անցնում. սակայն այդ անյաջողութիւնները եռանդ ու ոգևորութիւն են ներշնչում Սաքոյին որոնելու նոր, վատթարագոյն կորստաբեր միջոցներ։ Խէչանին մարդասպան ճանաչել տալով, շղթայակապ բանտ է ուղարկում և իր յաճախակի այցելութիւններով կարողանում է բանտի խոնաւութեան մէջ մաշող Խէչանի սիրտը գրաւել, բարեկամ ցոյց տալ, նրա աղջկանը և հարստութեանը տիրանալու համար, բայց բոլոր հնարները ի զուր անցան։ Սաքոն խուսափեց արդարադատ քննիչի դատապարտութիւնից, անցաւ Պարսկաստան իբրև պարսիկ կրօնաւոր։

Խէչանը վերջապէս ազատւում է, բայց բոլորովին մաշուած, ուժասպառ եղած. նա մեռնում է իր աղջկայ գիրեզմանի վրայ։ Այնուհետև Սմբատը ամուսնանում է իր առաջուայ սիրած աղջկայ՝ Հերիքնազի հետ։

Հայի խնդրի մէջ, ինչպէս երևում է բովանդակութիւնից, բոլոր գործողութիւնները պատւում են գինեվաճառ Սաքոյի անձի շուրջը, որի անունով խակապէս վէպը պիտի կոչուէր։ Վէպի մէջ սրա կեանքի մանրամասնութիւնները չէ նկարագրուած. ընթերցողին երևում է մէկ 12 տարեկան հասակում անպիտանութեան կամ գողութեան պատրուակով գինեվաճառների խանութների առաջ բարշ գալիս, մէկ էլ իբրև գինեվաճառ Սև ջրի մօտ։ Մանկութեան ժամանակ ոչ մի հովանաւորող ձեռք չունեցող և սանձարձակ կեանքին անձնատուր պատանին պիտի ունենար, անշուշտ, այն յատկութիւնները, որ ունէր նա։

Շուկայում տեղի ունեցող դէպքերին մասնակցողը և փողոցային շրջմոլիկների անբաժան երիտասարդ Սաքոն ձեռք էր բերել գործելու վարպետութիւն և հմտութիւն։ Նորա բնական ընդունակութիւնը, փորձառութեամբ ձեռք բերած կարողութիւնները գործադրւում էին միայն մի նպատակի համար՝ որքան կարելի է շատ փող վաստակել, մեծ կարողութեան տէր լինել։ Նրա աչքում հարստութիւնը ներկայանում է մի իդէալ, որին հասնելու համար անձն անգամ չի խնայում։ Սաքոյի կատարած չարութիւնները բղխում են փող վաստակելու տենչից։ Նա Խէչանի դէմ թա-

կարդներ է լարում ոչ թէ աղջկան տիրանալու, այլ նրա կարողութիւնը ժառանգելու համար. «Ինչանի աղջիկը չեմ առնում, նրա մալ ու գովլաթը պիտի լինի իմ կնիկը» (183)։ Այսպէս փողամոլութիւնը կուրացրել է Սաքօյին տեսնելու առաջն ընկած թշուառին, խլացրել է լսելու հարիւրաւոր աղքատ գիւղացոց արդար բողոքը հարստահարութիւնների համար և մեռցրել էր խիղճը արդար դատաւոր լինելու այն դէպքում, երբ բանտի խորշերում խեղճերին փթեցնելու և չարչարելու համար ծրագիրներ էր կազմում և գործադրում։ Բնաւորութեան այս կողմը աղբիւր է ծառայում մեացած գծերին. փող կորզելու համար ոչ մի միջոց չէ խնայում և փող վաստակելու տենչը արդարացնում է բոլոր ձեռնարկութիւնները։ Այս ճիղուիտական սկզբունքն ունէր Սաքօն իր գործունէութեան նշանաբան։

Նեղութեան մէջ ձգել, բանտարկել տալ ամիսներով օրուայ վաստակով կերակրուող գիւղացուն, կռուեցնել մարդկանց միմիանց հետ, նահապետական օջախի բաժանման պատճառ դառնալ աւելի մեծ չափով օգտուելու համար, այդ յատուկ էր Սաքօյին, որովհետև այդ կեղտոտ ընդունակութեան հետ նա ունէր և քաղցր լեզու, շողոքորթ վերաբերմունք, որով ծածկում էր իր սրտի չարութիւնը։ Կրքերին յագուրդ տալու համար նրան հարկաւոր էր մի ուժեղ բազուկ, մի հզօր պաշտպան, որի միջոցով կարողանար կատարել անպիտանութիւններ կամ պէտք եղած ժամանակը նրա հովանաւորութեանը դիմէր. այդպիսի մէկը Մովրովն էր։ Սաքօն հեշտութեամբ կարողացաւ նրան իր կողմը գրաւել, ցոյց տալ փողի կարևորութիւնը. ձեռք բերեց նաև լրտեսներ, գործիք շինեց թէ գիւղական վաշխառուներին և թէ «խղճմտանքը մեռած եսաւուլներին»։ Սրան յաջողւում էր գլխաւորապէս այն պատճառով, որ ունէր սոսրանալու չափ կարողութիւն, սուր միտք և ինտրիգներ լարելու հմտութիւն։ Միանգամից մի քանի գործ չէ սկսում, բայց և դադար էլ չունէր. «Եղորոսի շան պէս բերաններիս մսի կտորը վէր չքցենք և շուաքի քամակիցն ընկնենք», ասում էր նա։

Ռուս-Պարսկական պատերազմը Սաքօյի և Մովրովի

տենչանքներին լիառատ բաւականութիւն էր տալիս. յանուն պատերազմի կեղեքւում էր ժողովուրդը։ Երբ մեղալների խնդիրը մէջ տեղ է գալիս, Սաքոյի աչքում ոսկու նշանակութիւնը աւելի ևս մեծանում է, նրա մէջ հաստատւում է այն համոզմունքը, որ համրին լեզու, կոյրին աչք տուողը ոսկին է և վերջապէս այն է միակ աստուածը, ուստի հրաման է հանել տալիս, որ 184... թուականի «պոլիմպերեալ», որ առաջուց ժողոված ունէր և բաժանում էր կրկնապատիկը ստանալուց յետոյ, վճարողը կարող է շքանշան ստանալ, իբրև պատերազմին մասնակցող։ Այսպիսով գրգռում է դիւղացոց պատուասիրութիւնը, չզլանալով նաև մեդալը ստանալու համար իր ցոյց տուած աշխատութեամբ կամ «սըրտառուչ եղբայրական միջնորդութեամբ» դիւղացոց աչքը կապել և մէկի փոխարէն տասը շահել։ Նրա այս եղբայրական միջնորդութիւնը գործադրւում էր նաև յոգուտ աւազակների, որոնց յարմարութիւն և դիւրութիւն էր տալիս կողոպտելու և թալանելու։ Այս մտերիմ մարդկանց շնորհիւ ուզում էր փախցնել Հեղնարին, տէր լինել Խէչանի հարստութեան. և նա չէր ցաւում, չէր խղճահարւում անմեղներին իզուր տեղը դատապարտելով, այլ ցաւում է, որ ծրագիրները անկատար են մնում և նա զրկւում է Խէչանի հարստութիւնից ու վիրաւոր գազանի մահամերձ ոյժի թափով նա վերջին փորձն է անում, խորհուրդ է տալիս միամիտ մովրովին Երևանի բերդն ուղարկել ծերունի Խէչանին և ազատել միայն այն ժամանակ, երբ կտիրանան նրա շարժական և անշարժ կալուածներին։

Իրերի դրութիւնը փոխւում է։ Այս քայքայուած մթնոլորտը ուշադրութիւն է գրաւում, ճնշումը և հարստահարութիւնը ծնում են բողոքներ, ժողովրդի անհուն վերքերը հրաւիրում են բուժիչներ. գալիս է քննիչը իր արդար դատաստանով։ Եւ Սաքոն, որ երկարատև անիրաւութեան ու չարագործութեան պատճառով բթացրել էր ամեն մի առաքինի զգացում և դրսից ու ներսից ոչ մի բողոք չլսելով մաշուել էր բարոյապէս, այժմ վերջին ոյժերի լարումը ապարդիւն դանելով, հեռանում է օտար երկիր։ Սաքոն,

ճիշտ է, խոյս է տալիս մարմնական պատժից, բայց բարոյապէս նա տուժում է։ Պարսկաստանի խորքերում «մի մեծ գիւղի մօլլայ է. նա շատ թշուառութեանց պատճառ է դառնում, ամեն օր իր գեղականաց հետ կռիւներ է անում և բոլորին ձանձրացրել է»։

Այս տիպի մարդկանցից է մովրովը, նահանգի կառավարիչը։ Երկար տարիներ ծառայած, բացի կաշառակերութիւնից ոչ մի փորձութիւն ձեռք չբերած աստիճանաւոր է. վերին աստիճանի թոյլ կամքի տէր և գործիք դարձած Սաքոյին, թողնելով բոլոր վարչական գործերը նրա տրամադրութեան տակ։ Սաքոյից նա սովորում է փող կորզելու նորանոր միջոցներ ու հնարներ և միւս կողմից էլ աշխատում էր Երևանում նստած իշխանների սիրտը շահել. «շատ զալումնա էս Սաքոն, թէ որ սրա պէսները չլինէին, ինչ պիտի լինէր մեր հալը, մենք քաղցած կը զկոտայինք», այսպէս էր հաւատացած մովրովը։ Սաքոյի հետ միացած հարստահարութեան ամեն մի նոր միջոց սրբագործում էր պետութեան հրամանով, թէև իր միամտութեան շնորհիւ չնչին մասն էր ստանում միայն։

Իբրև վարչական մարդ հեռատես չէ. դիւրահաւատ է և ոյժ ու հնարաւորութիւն չունի կեղծիքները իմանալու. երկար մտածելու կարողութիւն էլ չունի, այլ ուրիշի հնարած խարդախ միջոցների վրայ զարմանում է և, ըստ կարելոյն, իր աջակցութիւնը ցոյց տալիս։

Այս տիպերի հակապատկերն է ներկայանում Խէչանը իր ընտանիքով. իբրև նահապետական ընտանիք, առատ բարիքներով, տան դռները միշտ բաց էին ամեն մի օտարականի կամ աղքատի առաջ։ Խէչանի միակ փառասիրութիւնը նրա հիւրասիրութիւնը ու պարզասրտութիւնն էր։ Մասամբ ծերութեան հասակը, մասամբ էլ որդիների պատճառած ցաւը, որոնք վաղուց հեռացել էին այս աշխարհից տանելով իրենց հետ ծնողական սիրտը, մաշել և զգայուն էին դարձրել Խէչանին, այնպէս որ փոքրիկ հարուածից նրա սիրտը ապակու պէս փշրւում էր։ Ուրախութեան ժամանակ, երբ լսում է փոքրիկի երգը, յիշում է իր որդիներին, իրեն պահել

տենչանքներին լիառատ բաւականութիւն էր տալիս. յանուն պատերազմի կեղեքւում էր ժողովուրդը։ Երբ մեղալների խնդիրը մէջ տեղ է գալիս, Սաքոյի աչքում ոսկու նշանակութիւնը աւելի ևս մեծանում է, նրա մէջ հաստատւում է այն համոզմունքը, որ համբին լեզու, կոյրին աչք տուողը ոսկին է և վերջապէս այն է միակ աստուածը, ուստի հրաման է հանել տալիս, որ 184... թուականի «պօլիմպերեալ», որ առաջուց ժողոված ունէր և բաժանում էր կրկնապատիկը ստանալուց յետոյ, վճարողը կարող է շքանշան ստանալ, իբրև պատերազմին մասնակցող։ Այսպիսով գրգռում է դիւղացոց պատուասիրութիւնը, չզլանալով նաև մեդալը ստանալու համար իր ցոյց տուած աշխատութեամբ կամ «սըրտառուչ եղբայրական միջնորդութեամբ» դիւղացոց աչքը կապել և մէկի փոխարէն տասը շահել։ Նրա այս եղբայրական միջնորդութիւնը գործադրւում էր նաև յոգուտ աւազակների, որոնց յարմարութիւն և դիւրութիւն էր տալիս կողոպտելու և թալանելու։ Այս մտերիմ մարդկանց շնորհիւ ուզում էր փախցնել Հեղնարին, տէր լինել Խէչանի հարստութեան. և նա չէր ցաւում, չէր խղճահարւում անմեղներին իզուր տեղը դատապարտելով, այլ ցաւում է, որ ծրագիրները անկատար են մնում և նա զրկւում է Խէչանի հարստութիւնից ու վիրաւոր գազանի մահամերձ ոյժի թափով նա վերջին փորձն է անում, խորհուրդ է տալիս միամիտ մովրովին Երևանի բերդն ուղարկել ծերունի Խէչանին և ազատել միայն այն ժամանակ, երբ կտիրանան նրա շարժական և անշարժ կալուածներին։

Իրերի դրութիւնը փոխւում է։ Այս քայքայուած մըթնոլորտը ուշադրութիւն է գրաւում, ճնշումը և հարստահարութիւնը ծնում են բողոքողներ, ժողովրդի անհուն վէրքերը հրաւիրում են բուժիչներ. գալիս է քննիչը իր արդար դատաստանով։ Եւ Սաքոն, որ երկարատև անիրաւութեան ու չարագործութեան պատճառով բթացրել էր ամեն մի առաքինի զգացում և դրսից ու ներսից ոչ մի բողոք չլսելով մաշուել էր բարոյապէս, այժմ վերջին ոյժերի լարումը ապարդիւն գտնելով, հեռանում է օտար երկիր։ Սաքոն,

ճիշտ է, խոյս է տալիս մարմնական պատժից, բայց բարոյապէս նա տուժում է։ Պարսկաստանի խորքերում «մի մեծ գիւղի մօլլայ է. նա շատ թշուառութեանց պատճառ է դառնում, ամեն օր իր գեղականաց հետ կռիւներ է անում և բոլորին ձանձրացրել է»։

Այս տիպի մարդկանցից է մովրովը, նահանգի կառավարիչը։ Երկար տարիներ ծառայած, բացի կաշառակերութիւնից ոչ մի փորձութիւն ձեռք չբերած աստիճանաւոր է. վերին աստիճանի թոյլ կամքի տէր և գործիք դարձած Սաքօյին, թողնելով բոլոր վարչական գործերը նրա տրամադրութեան տակ։ Սաքօյից նա սովորում է փող կորզելու նորանոր միջոցներ ու հնարներ և միւս կողմից էլ աշխատում էր Երևանում նստած իշխանների սիրտը շահել. «շատ զալումա էս Սաքօն, թէ որ սրա պէսները չլինէին, ինչ պիտի լինէր մեր հալը, մենք քաղցած կը զկոտայինք», այսպէս էր հաւատացած մովրովը։ Սաքօյի հետ միացած հարստահարութեան ամեն մի նոր միջոց սրբագործում էր պետութեան հրամանով, թէև իր միամտութեան շնորհիւ չնչին մասն էր ստանում միայն։

Իբրև վարչական մարդ հեռատես չէ. դիւրահաւատ է և ոյժ ու հնարաւորութիւն չունի կեղծիքները իմանալու. երկար մտածելու կարողութիւն էլ չունի, այլ ուրիշի հնարած խարդախ միջոցների վրայ զարմանում է և, ըստ կարելոյն, իր աջակցութիւնը ցոյց տալիս։

Այս տիպերի հակապատկերն է ներկայանում Խէչանը իր ընտանիքով. իբրև նահապետական ընտանիք, առատ բարիքներով, տան դռները միշտ բաց էին ամեն մի օտարականի կամ աղքատի առաջ։ Խէչանի միակ փառասիրութիւնը նրա հիւրասիրութիւնն ու պարզասրտութիւնն էր։ Մասամբ ծերութեան հասակը, մասամբ էլ որդիների պատճառած ցաւը, որոնք վաղուց հեռացել էին այս աշխարհից տանելով իրենց հետ ծնողական սիրտը, մաշել և զգայուն էին դարձրել Խէչանին, այնպէս որ փոքրիկ հարուածից նրա սիրտը ապակու պէս փշրւում էր։ Ուրախութեան ժամանակ, երբ լսում է փոքրիկի երգը, յիշում է իր որդիներին, իրեն պահել

չի կարողանում, արտասուախառն գրկում է երեխային և իր որդիների մահը ողբում. «փառք իրան... ինչ կլիներ չորսից իրեքին իրա բաժին վերցներ, Սմբատին էլա թողներ մեզ մխիթարանք»։ Եւ ծերութեան հասակը քաղցրացնելու և խորին ցաւը մեղմացնելու համար, որոշում է մինուճար աղջկանը տալ գրկում սեղմած, բոպէապէս որդեգրած երեխային։

Երիտասարդութեան և ծերութեան օրերում նա չի մասնակցել համայնքի վերաբերեալ խնդիրներում. նա չէր ցանկանում ոչ տանուտէր և ոչ էլ երեցփոխ լինել, որ չլինի թէ «սխալմունքով գանձանակի կամ մոմի փողից մի սև գրոշ խառնուի ջերի սև փողերի հետ ու խարջուի. չէ որ իմ հալալս կը հարամուի, իմ տունը կ'քանդուի» (66)։

Այս աստուածավախ նահապետի հսկողութեամբ կառավարուող ընտանիքի խաղաղութիւնը վրդովում է չար սատանան, որից յետոյ ընտանիքը կրում է իրար յաջորդող մէկը միւսից սարսափելի աղէտներ և վերջանում է Խէչանի մահուամբ։

Երկրորդական տիպերից են Սմբատը, Հեղնարը և Հերիքնազը։ Սմբատը երեխայ ժամանակից ներկայանում է մի վաւրուն, համարձակ տղայ. աղքատ ընտանիքի զաւակ է, բայց ունի հարուստ սիրտ։ Ընկերների մէջ նրան մատով էին ցոյց տալիս իբրև լաւ ջիրիդ խաղացող և համեստ ու բարի բնաւորութեան տէր. 16 տարեկան հասակում, օրինակ, ամօթ էր համարում նշանածի մօտ գնալը կամ նրան տեսնելը։ Սմբատի մէջ զարգացած է պատուասիրութեան զգացումը, նա իմանում է Հեղնարի դաւաճանութիւնը, այրւում, խորովւում է և իր դառնութիւնը ժողոված բռունցքի մէջ թափում է Հեղնարի սիրտը խլող Արշակի գլխին։ Այս բաղութեան և ապիկարութեան հետ ունի նաև պարտաճանաչութեան գաղափար և պարզամտութիւն։

Ինչպէս Սմբատը իդէալացրած ներկայացուցիչ է հանդիսանում գիւղական երիտասարդութեան, այդպէս է և Հերիքնազը, իբրև ներկայացուցիչ գիւղական ամօթխած

սեռի, իսկ իսկական հարուստ աղջկայ տիպ Հեղնարն է, ծածկամիտ մի աղջիկ։ Սմբատին չի սիրում, որովհետև ինքը հարուստի աղջիկ է, աղքատ ընտանիքում չէ ուզում հարս լինել. «Սմբատն ինձ արժանի չի, ես քնած մոլորածի կնիկ դառնալու չեմ. իմ հոր հարստութիւնի տէրն ես եմ, ես կուզեմ, որ իմ մարդը գիւղամիջումը մի անուն ունենայ, ինձ էլ խանում ասեն, մեր դռանն էլ մենծաւորներ վէր գան...» (126)

Վէպի մէջ երևան են գալիս նաև գիւղական քահանան, տանուտէրը, ռամիկը, թուրքը, աւազակը, որոնց բնաւորութիւնները, ինչպէս մի անգամ նկատեցինք, բնական և կենդանի են։ Բնաւորութիւնների այսպիսի յաջող նկարագրութեան և նրանց հետզհետէ զարգացման պատճառով, համեմատական չափով վերցրած, Հացի խնդիրը միւսների նկատմամբ բարձր է, բայց և նոյնպէս վարակուած է միւսներին յատուկ ախտով, այսինքն կան անբնական տեսարաններ, աւելորդաբանութիւններ, դիմումներ, ընդհատումներ։ Այսպէս օրինակ՝ անբնական և հոգեբանօրէն անհասկանալի է այն տեսարանը, երբ Հեղնարը լսում է պսակի արգելումը, մոռանում է մի բոպէ դէպի Սմբատը տածած չափազանց սիրուութիւնը և այդ վայրկեանին նրան սիրում է այնպէս, «որ երբէք չի սիրել ոչ ոք նրանից աւելի... դէն ձգեց գլխից հարսնութեան քողը, սուր ճիչ արձակեց և թուլացաւ գետին ընկաւ» (226)։ Նոյնպէս և Սաքօն, երբ չի կարողանում նպատակին հասնել՝ Հեղնարին առնել, կատաղում, բորբոքւում է այդքան անյաջողութիւնների համար, դէս ու դէն է ընկնում, բայց նոյն գիշերը էլի հանգիստ քնում է (218)։ Եւ վերջապէս գլխաւոր գործող անձի՝ Սաքօյի բնաւորութիւնը բաւականի միակողմանի է։ զարգացած է նրա մէջ միայն փողասիրութիւնը, նա ոչ ներքին մաքառում ունի։ որովհետև չարութիւնները յաճախ մեքենայաբար է անում, որ պարզուէր նրա ներքին աշխարհը և ոչ էլ նրա դէմ կանգնած է մի բարոյապէս ուժեղ անձնաւորութիւն, որպէսզի մաքառումը աւելի ուժգին լինէր, վէպը աւելի հետաքրքրութիւն ստանար։

Բացի սրանից այդ գեղեցիկ նիւթը ծանրաբեռնուելով շատ աւելորդ մասերով, մասամբ կորցրել է իր նշանակութիւնը. այդ տեսակէտից գովելի է գերմաներէն թարգմանողի արած փառաւոր կրճատումները։ Եւ իրօք, ինչ կարիք կար պատմութեան թելը կտրել, ցոյց տալու համար այն դժուարութիւնները, որ հանդիպում է գիւղական կեանքը նկարագրողը կամ ցոյց տալ ժողովրդական նիւթեր ժողովելու կարևորութիւնը (121)։ Առանց խզճահարուելու կարելի է դուրս ձգել 3, (127—134), 20, 28, 32, 43 և այլն գլուխներ, երեսներ, ձգձգուած պարբերութիւններ։ Ցանկալի էր նոր հրատարակած տեսնել, բայց կրճատած, փոփոխած, ընթերցանութեան համար սիրելի դիրք դարձնելու համար։

Չնայած այս թերութիւններին, վէպի մէջ շօշափած երկու՝ մէկը միւսից կենսական գաղափարներ, արտայայտութիւն են գտել համարեա անկախ վիպասանից, որովհետև հեղինակի նպատակը եղել է 40-ական թուականների Աշտարակի կեանքի պակաս մնացածը արձանագրել։ Առաջինը՝ գիւղացոց տգեղ սովորութիւնն է պախարակում, երբ նոյն իսկ օրօրոցի երեխային նշանում են, այդ բաշիբարթամայ կոչուած յիմար սովորութիւնը, որը վերջանալու վրայ է, և երկրորդ գաղափարը պարզուած է յանձին միկիտան Սաքոյի։ Վիպասանը տուել է չարագործութեան մի այլ պատկեր, քան յետոյ արել է Ցեցերի մէջ, միևնոյն ժամանակ ուզեցել է ցոյց տալ արդարադատութեան տարած յաղթանակը։ Թէպէտ Սաքոն խուսափում է արդարադատութեան վճռից և նոր չարութիւնների պատճառ դառնում, յամենայն դէպս չպիտի ընդունենք, որ վիպասանը «բարոյական գեղեցկի պահանջը» չի կատարել, ինչպէս գրում է պ. Բարամեան, որովհետև դրանից աւելի ինչ պատիժ, երբ դիւահար եղած Սաքոն մօլլայի հագուստով չարութիւն է անում Պարսկաստանում. այս մի դատավճիռ է, որպիսին մարդկային միտքն ըմբռնել անգամ դժուարանում է. Կայէնի պէս նա հալածական ու թափառական կեանքով տանջւում է սպասել ուրեմն, որ նա նորից հանդէս գայ, նշանակում է վի-

պասանից պահանջել, որ պատկերացնէ գեհենը իր ամենայն այլանդակութեամբ և ճիւաղներով։

Գալով Պռոշեանի վիպասանութիւնների գրութեան ոճին, լեզուին, պէտք է նկատել, որ բոլորն էլ, քիչ բացառութեամբ, կրում են հեղինակի յատուկ դրոշմը։ Նրա ժողովրդական բարբառով գրած վէպերի ոճը կենդանի է, աշխոյժ, թէև երբեմն անմշակ՝ու ձգձգուած. ինչ հաւատարմութեամբ նկարագրել է կեանքը, նոյնն էլ պահել է ոճի նկատմամբ. խօսում է գիւղացին, քահանան, ծերունին, երիտասարդը և ընթերցողը կարծում է, թէ իրեն հետ են զրուցում և ոչ մի կեղծութիւն չի նշմարւում։ Վիպասանը աշխատել է գիւղացու արտասանած միտքը իր ամբողջութեամբ և խօսակցական եղանակով տալ, թէև արտասանութեան, հնչիւնների վրայ պէտք է որ առանձին ուշադրութիւն դարձրած չլինի, ուստի մեծ քանակութեամբ արձանագրուել են շատ դարձուածներ, ասացուածներ, առածներ, որ ցանկալի էր վէպերից ժողովել։ Վերջիններիս մի քանիսը տարածուած են, իսկ միւսները յատուկ Աշտարակեցոց. տօ, սատանախաբ Կարբեցի... օրական քանիսի գլուխն ես անլուայ կլէկում, դատարկ փայտէն շունը չի հաչալ, մինչև շունչդ եղունգիտ ծայրին է (կենդանի ես), կրակի առաջին չախմախի չեն տալ, ընկերների տակը ջուր կապեց (խաբեց) կովը հորթին, հորթը կովին, գլուխը տանի նախարարածին և այլն և այլն, որի ժողովածուն անչափ նիւթ կմատակարարէ լեզուով զբաղուողներին, որովհետև իրենց առաջ ունեն մի գաւառաբարբառի ժողովածու, հարուստ թէ բառարանով և թէ ստուգաբանական ու համաձայնական կանոններով։ Հարուստ է բառարանը, որովհետև մանրակրկիտ դիտողութիւնների արդիւնքը արտայայտելու համար հարկաւոր են բառեր, և Պռոշեանը ոչ թէ ստեղծում է ինքը, այլ ժողովրդի սեփականութիւնն է տալիս։ Կռուածաղիկի մէջ՝ էջ 276 մօտ քսան, կամ Սկիզբն Երկանցի մէջ՝ էջ 53 մօտ 40 ծաղիկների անուն է տալիս. նոյնչափ էլ ուրիշ տեղ խաղողի տեսակ-

ներ և այլն։ Բերականական ձևով հարուստ է, որովհետև ընթերցողի հետ գիւղացին է խօսում կենդանի կերպով աշխատանքի ժամանակ, խաղաղ ժամանակ, կռուի բոպէներին, ուրախութեան, տխրութեան և ուրիշ վայրկեաններում։

Դժբախտաբար ոճի այդպիսի կենդանութիւնը պահուած չէ վերջին գրական լեզուով գրուածքների մէջ, որտեղ բանաստեղծական ոճը երբեմն ընդհատւում է անհարթ ձևերով, բառերի սխալ դասաւորութեամբ և կամ լրագրական անճոռնի լեզուի ազդեցութեամբ առաջացած դարձուածներով։ Բերականական անկանոնութիւններ պատահում են նախ՝ բացասական մասնիկի նկատմամբ, որը մեծ մասամբ բառերի սկիզբն է դրւում. նա չի ասանջ արեց, արանչիրը այգիները չը ման եկան, չէին անգամ ուշը դարձնում և այլն, և երկրորդ՝ յատկացուցչի և յատկացեալի նկատմամբ, օր. լեզուն բացուեց Սամփսոնի. յետոյ յաճախ ենթական նախադասութեան վերջն է գնում. չորս սենեակներ ունի տունը, յարձակուեց և կամեցաւ իջեցնել Ֆարմասոնի գլխին Վարդանը։

Յաճախ պատահում ենք անկանոն հոլովումների, երևի 60-ական թուականների սրբազան ժառանգութիւնն է, որ Պռոշեանը չի ուզեցել մոռանալ. օր. մարդիս, մարդի, սրբութենի, աղքատութենի, կամ «խօսելից յետոյ, բարձրացնելից յետոյ, սառնալից և այլն. գործ է ածում նաև գրաբար բառեր, որոնց հետ և անճոռնի բառեր, օր. շինուած, այլանդակուացել են, պատրուակուել և այլն։ Սովորական է նաև որոշիչը բաժանել որոշեալից, որ երբեմն անմիտ բան է դուրս գալիս. օր՝ կանաչ Աստուծու փառք խալիչան և այլն։

Այս անկանոնութիւններից զատ կան նախադասութիւններ և պարբերութիւններ, որ այլանդակ կազմութիւն ունին. օր՝ 1. «եթէ իրանց ընտաւոր ընդունակութիւնով մասնաւոր գրավարժութեան շնորհք ունեցան, այն է՝ որ փիլիսոփայական գիտութիւնները կուլ են տուել», 2. Վաղարշապատի գիւղում մարակն խաղացնելով հպարտ-հպարտ, կամ թէ Վանքի ձրի եկած գարու շնորհիւ նստում է նա իր դեբացած պատկերի նման ձիու վրայ («Կոչ.» 187։) 3. Հաւա-

նական է, որ Սեմիզարի բարձր հասակը, կեռ-կեռ յօնքերը... յափշտակեցին երիտասարդ զարգարի ուշքն ու միտքը, երբ նա Փիլումի երկայնափող, բախչասարայ, անսխալական հրացանն արծաթի օղերով զարդարելուց յետոյ՝ մի օր էլ պատուէր ստացաւ չափել նորա հրեշտակագեղ դուստր Սեմիզարի հոլանի բիլակը, հնուց մնացած ջարդ ոսկիներից աղջկայ համար մի ապարանջան շինելու» (Բզդէ 210)։

Բիչ չեն պատահում նաև կեղծ կլասիք ձևեր, որ գեղեցկութեան փոխարէն աչք են ծակում. օր՝ Մորփէոսի շաղ տուած խաշխաշի փոշին արդէն իր ազդեցութիւնն էր արել... (Ցեցեր 312)։ Այս բոպէիս գեղեցկութիւնն իւր գահը դրել է Սօնայի երեսին» (55), Կ. Պոլսի հայութեան կաթսայի տակ մոխրի մէջ խոր անթեղնած հուրը յետ բացուած էր ի շնորհս Սահմանադրութեան (Սկ. եր. 22), Ներսէս աշտարակեցի արքեպիսկոպոսը, որի դառն մահուան յիշատակը դեռ չէ լուացուել ամեն հայի յիշողութիւնից, գլուխը յետ էր դրել այդ գաղթականութիւնն իրագործելու համար (Շահէն 30), ընութիւնը մայիսին աւելի առաջնորդում է պատանի սրտին դէպի հակառակ սեռի քաղցրութիւնը (39)։

Երբեմն էլ խաղ է արել նախադասութեան հետ, երևի պօլսեցիներից վերցրած, օր՝ մտաւ տեղը, մի քիչ միջի մատովը քորեց ընեղը, ասեց ես կգտնեմ սրա ճար ու դեղը, երբ որ թազայ գինին կը լցուի զեղը, կչորանայ կանաչի ծեղը, Արշաւիրին կբցեմ նեղը, որ չի հալցնեն մօր Սօսի սրտի եղը (Սօս և Վարդ. 44), և այսպիսի խաղերի ժամանակ զոհել է քերականութիւնը (61, 73)։ Բարեբաղտաբար Պռոշեանը վաղուց է վերջացրել այդպիսի ձևեր գործ ածելը, թէև յետոյ դրա փոխարէն գրական ուրիշ ջահելութիւն է արել օր. «Ոչ մի ճարտարարուեստ իր բնական հանճարի ճարտարութիւնը ճարտարանմուտ կերպով գործ դնելուց...» (Յուն. 171)։

Կան և երկմիտ նշանակութիւն ունեցող նախադասութիւններ, որ համարում ենք տպագրական կամ սխալ կէտադրութիւնից առաջացած սխալներ։ Պռոշեանի գրութեան ձևի, ոճի մասին այսքանը բաւական համարելով, որովհետև

[Հ.]

մասամբ իր ժամանակին գնահատուել է, վերջացնում ենք պ. Ա. Զօպանեանի՝ մեր գեղարուեստագէտ քննադատի ընորոշող խօսքերով. «ոճը, անհաւասար ու պիտակ, ժողովրդական պատկերալից դարձուածքներու կը միացնէ պատուելիական ճոռոմաբանութիւններ և հեռու է այն միացայտ, համասեռ հզօր ժայթքումն ունենալէ, որ Արովեանին ոճը կ՚որակէ»։

ԼՍԵՑԻ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080414

Usgm
513